

Մրցութային փաթեթ

**«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար «10կՎ գծային բաժանիչների
մատակարարման և տեղադրման» աշխատանքների ձեռքբերման
առաջարկի հարցում**

Առաջարկի հարցման հղման համար՝ «ՔԳՀԿ 16/22»

Պատվիրատու՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Երկիրը՝ Հայաստան

Բովանդակություն

Մրցույթի հրավեր.....	Error! Bookmark not defined.
Բաժին 1. Մրցույթի մասնակցության ցուցումներ.....	4
2. Իրավունակ Հայտատուներ	4
3. Իրավունակ երկրները	6
4. Պատժամիջոցներ	7
5. Հայտերի կազմում և ներկայացում.....	7
6. Հայտերի բացումը և գնահատումը.....	11
7. Պայմանագրի շնորհում	12
8. Փաստաթղթերի պարզաբանումներ	12
9. Փաստաթղթային փոփոխություններ.....	12
10. Լեզու	12
11. Արժույթ.....	13
12. Գաղտնիության Պահպանում	13
13. Շահերի բախում	13
14. Ծախսեր	14
15. Հայտերի մերժման մասին հայտարարումը	14
S1 Հայտի ձև	15
S2 Ենթակապալառուներ ներգրավելու մասին հայտարարություն.....	18
S3 Աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ստուգաթերթիկ	19
S5 ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎ.....	34
S6 Աշխատանքների իրականացման ժամանակացույց.....	35
ձև FIN -1: Ֆինանսական կատարողական	36
Ձև ELI -1-ին` Հայտատուի տեղեկատվական թերթիկ	39
ձև LIT-1. Սպասվող/առկա դատավարություն և արբիտրաժ.....	41
ձև EXP-1. Մասնագիտական փորձ	42
ձև PER-1-` Առաջարկվող աշխատակազմ.....	43

Մրցույթի հրավեր

Առաջարկների հարցման հղման համար՝ «ՔԳՀԿ 16/22»

Մրցույթի մեկնարկի ամսաթիվ՝ 2-ը նոյեմբերի 2022թ.

Պատվիրատուն՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Գորիս, Գր.

Տաթևացու 2 հասցեում, հայտարարում է բաց Մրցույթ:

1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ն (Պատվիրատու), ՔոնթուրԳլոբալ ընկերությունը, հայտարարում է բաց մրցույթ **«10կՎ գծային բաժանիչների մատակարարման և տեղադրման»** աշխատանքների ձեռքբերման համար, որը կիրականացվի մեկ փուլով առաջարկների հարցման եղանակով՝ երկու փակ ծրարներով, որտեղ մասնակից ընկերությունները ներկայացնում են որակավորման չափանիշներին համապատասխանող տեղեկատվությունը և փակ ծրարով գնային առաջարկը՝ միաժամանակ օգտագործելով Coupa էլեկտրոնային գնումների համակարգը:
2. Մատակարարները / Կապալառուները պետք է իրենց առաջարկները (տեխնիկական և ֆինանսական) ներկայացնեն էլեկտրոնային եղանակով՝ օգտագործելով Coupa համակարգը և հաշվի առնելով Coupa-ի օգտագործման պայմանները:
3. Ընտրված մասնակիցը որոշվում է համապատասխանող մրցութային փաթեթի պահանջներին և նվազագույն գին ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:
4. Աշխատանքները պետք կատարվեն 270 օրվա ընթացքում՝ սկսած պայմանագրի երկկողմանի կնքման օրվանից:
5. Առաջարկի ներկայացման վերջնաժամկետը 2022թվականի նոյեմբերի 30-ը, ժամը 11:00-ն, Երևանի ժամանակով: Հետաքրքրված ընկերությունները կարող են լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ ստանալ սույն առաջարկի հարցման վերաբերյալ՝ իրենց հարցումը ուղարկելով գնումների պատասխանատու Ա. Նիկոլայանին arevik.nikolayan@contourglobal.com; Հեռախոս՝ 0284 50022:
6. Սույն մրցույթն անցկացվում է ContourGlobal-ի գնումների էլեկտրոնային Coupa համակարգի միջոցով: Հայտատուները, ովքեր հետաքրքրված են այս գնումով, կարող են գրել. arevik.nikolayan@contourglobal.com հասցեին՝ նշելով իրենց էլ. հասցեն, հաստատել իրենց հետաքրքրությունը և ստանալ Coupa համակարգին մասնակցելու հրավեր:
7. Գնումները իրականացվում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի 273Ա որոշմամբ և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգի համաձայն, որը կարող եք գտնել սույն հղումով. <https://eservices.contourglobal.eu/armenia/>

Սույն ԱՀ-ից բխող վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային փաթեթին ամբողջությամբ կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով.

<https://contourglobal.box.com/s/1u9xyoyubgx9mm1x1t5p1p392jpftamb>

Բաժին 1. Մրցույթի մասնակցության ցուցումներ

1. Նպատակ

Պատվիրատուն ներկայացնում է սույն Առաջարկի հարցումը (ԱՀ) Գնահարցումը համապատասխան որակավորում ունեցող ընկերություններին («Հայտատուներ»)՝ ուղարկելու հայտերը (առաջարկները) **«10ԿՎ գծային բաժանիչների մատակարարման և տեղադրման» աշխատանքների ձեռքբերման 16/22** ծածկագրով մրցույթի համար՝ միանվագ վճարումների վրա հիմնված պայմանագրի սկզբունքով:

Սույն ԱՀ-ն տրամադրում է անհրաժեշտ տեղեկություն ԱՀ-ի գործընթացի և նպատակների վերաբերյալ՝ օժանդակելով հնարավոր հայտատուներին հայտերի (առաջարկներ) պատրաստման և ներկայացման գործում:

2. Իրավունակ Հայտատուներ

2.1 Դիմել կարող են իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, գործող պայմանագրի հիմքով կոնսորցիումները կամ անձինք նման պայմանագիր կնքելու մտադրությամբ՝ ուղեկցող նամակով: Կոնսորցիումի դեպքում բոլոր անդամները համատեղ և առանձին պատասխանատվություն են կրում Պայմանագրի կատարման համար՝ Պայմանագրում ամրագրված պայմանների համաձայն: Կոնսորցիումը առաջադրում է լիազոր ներկայացուցիչ, որն իրավասու է ղեկավարելու բոլոր գործերը Կոնսորցիումի և բոլոր և ցանկացած անդամների անունից ԱՀ-ի ընթացքում (այն դեպքում, երբ կոնսորցիումը հայտ է ներկայացնում) և պայմանագրի շուրջ բանակցությունների, ստորագրման և կատարման ժամանակ (այն դեպքում, երբ Կոնսորցիումի հետ է կնքվում Պայմանագիրը): Մրցութային գործընթացի և պայմանագրի կատարման (դրա կնքման դեպքում) ընթացքում Հայտատուի կառուցվածքի, ձևավորման կամ իրավական կարգավիճակի ցանկացած փոփոխություն, ենթակա է Պատվիրատուի գրավոր հաստատմանը:

Ստորև նշված հանգամանքներից որևէ մեկի առկայության դեպքում Հայտատուները իրավունակ չեն մասնակցելու ԱՀ-ի ընթացակարգին և, հետևաբար, կնքելու Պայմանագիրը:

- 1) նրանք, ովքեր Հայտի ներկայացման օրվա դրությամբ դատական կարգով սնանկ են ճանաչվել կամ սնանկ ճանաչվելու ռիսկային գոտում են;
- 2) նրանք, ովքեր հայտի ներկայացման օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտավորություններ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով;
- 3) նրանք, ովքեր եղել են դատապարտված կամ դատապարտված Հայտատուի գործադիր մարմնի ներկայացուցիչն են եղել հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում ֆինանսական ահաբեկչության, երեխաների շահագործման կամ մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցավորության, քրեական միավորում ստեղծելու կամ

դրանում մասնակցության, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ դրանում միջնորդության համար, ինչպես նաև օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը վերացվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով;

- 4) այն դեպքում, երբ գնումների ոլորտում հակամրցակցային պայմանագրի կամ գերիշխող դիրքի չարաշահման համար օրենքով սահմանված կարգով ընդունվել է անբողոքարկելի վարչական ակտ հայտը ներկայացնելու օրվանից մեկ տարվա ընթացքում;
- 5) նրանք, ովքեր ըստ ՔոնթուրԳլոբալի Համապատասխանության քաղաքականության և ընթացակարգի ներառված են սև ցուցակում;

2.2 Հայտատուների (i) առանձին մասնակցությունը փոխկապակցված սուբյեկտի (ների) կամ անձանց կողմից, (կամ) (ii) ստեղծված նույն սուբյեկտի (ների) կամ անձի (անձանց) կողմից կամ (iii) նույն կազմակերպությանը կամ անձին պատկանող ավելի քան հիսուն տոկոս բաժնեմաս ունեցող հայտատուների առանձին մասնակցությունը չի թույլատրվում, բացառությամբ ԱՀ-ի գործընթացին որպես մեկ Հայտատուի (Կոնսորցիում) մասնակցության դեպքերի;

- 1) ֆիզիկական անձինք և (կամ) կազմակերպությունները համարվում են փոխկապակցված, եթե նրանք նույն ընտանիքի անդամներ են, կամ ղեկավարում են ընդհանուր տնտեսություն կամ համատեղ գործունեություն, կամ նրանք գործում են համատեղ՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից;
- 2) ֆիզիկական անձինք և (կամ) կազմակերպությունները համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը՝

ա. Որպես հայտատու տնօրինում է տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին,

բ. Կարող է կանխորոշել իրավաբանական անձի որոշումները՝ ՀՀ օրենսդրությամբ չարգելվող կարգով,

գ. Հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահը, խորհրդի նախագահի տեղակալը, խորհրդի անդամ, գործադիր տնօրենը, նրա տեղակալը, գործադիր մարմնի գործառույթներն իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահը կամ անդամը,

դ. Հանդիսանում է իրավաբանական անձի աշխատակից, ով աշխատում է գործադիր տնօրենի անմիջական հսկողությամբ կամ էական ազդեցություն ունի իրավաբանական անձի որոշումներ կայացնող մարմինների վրա;

- 3) Սուբյեկտի կարգավիճակ չունեցող հայտատուները համարվում են փոխկապակցված, եթե՝

- ա. տվյալ անձը քվեարկող բաժնետոմսերի (այսուհետ՝ բաժնետոմսերի) ևս տասը տոկոսի սեփականատերն է, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրով հնարավորություն ունի կանխորոշելու մյուսի որոշումները:
- բ. Հայտատուն (բաժնետերը) և (կամ) Հայտատուները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տնօրինել նրանցից մեկի քվեարկող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին (ներառյալ վաճառք, հավատարմագրային կառավարում, համատեղ գործունեության պայմանագրեր, հանձնարարականներ կամ այլ գործարքներ) կամ հնարավորություն ունի նախապես որոշումներ կայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված կարգով:
- գ. նրանցից մեկը ղեկավար մարմնի կամ նմանատիպ պարտականություններ կատարող այլ հաստատության անդամ է, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից մեկը միաժամանակ հանդիսանում է նման պարտականություններ կատարող մյուս հաստատության ղեկավար մարմնի անդամ:
- դ. նրանք գործել են կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով տնտեսական ընդհանուր շահերից:
- 4) Այս կետի առնչությամբ հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատիկ-պապիկը, քույրը, եղբայրը, զավակները, քրոջ և եղբոր ամուսինը և երեխաները համարվում են ընտանիքի անդամ:
- 2.3 Յուրաքանչյուր Հայտատու հավաստում է S1 ձև-ում հայտի ներկայացման նամակում, որ հայտում ողջ տեղեկությունը ճիշտ է՝ որպես Իրավունակ Հայտատուի հաստատման համար: Սա ԱՀ-ի մասնակցության համար պարտադիր պահանջ է:
- 2.4 Հայտատուն (ներառյալ ցանկացած Համատեղ Գործունեության անդամները) ներկայացնում է միայն մեկ Հայտ կամ իր անունով, կամ որպես Համատեղ Գործունեության մաս մեկ այլ Հայտում: Եթե հայտատուն ներառյալ Համատեղ Գործունեության որևէ անդամ, ներկայացնում կամ մասնակցում է մեկից ավելի հայտերով, ապա բոլոր այդպիսի հայտերը համարվում են անիրավունակ և մերժվում: Այնուամենայնիվ, սա չի սահմանափակում միևնույն ենթակապալառուի ընդգրկումը մեկից ավելի ԱՀ-երում:

3. Իրավունակ երկրները

Հայտատուն կարող է լինել ցանկացած երկրի քաղաքացի, բացառությամբ ոչ իրավունակ երկրների: Երկրները, անձինք կամ սուբյեկտները համարվում են մասնակցության համար ոչ իրավունակ, եթե նրանց գործունեության հիմնական վայրը գտնվում է այն երկրում կամ տարածքում, կամ ընդգրկված կամ կազմավորված է այն երկրի կամ տարածքի օրենքների համաձայն, որը հանդիսանում է Պատժամիջոցների համար պատասխանատու ներքոնշյալ

մարմինների համար թիրախ՝ Միացյալ Նահանգների կառավարություն, Միավորված ազգերի կազմակերպություն, Եվրոպական միություն, Միացյալ Թագավորություն, Համաշխարհային բանկ կամ վերը նշվածներից որևէ մեկի համապատասխան պետական հաստատությունները կամ գործակալությունները:

Հայտատուն համարվում է տվյալ երկրի քաղաքացիություն ունեցող, եթե ստեղծվել, գրանցվել և գործում է այդ երկրի օրենսդրության դրույթներին համապատասխան, ինչը վկայում է նրա կանոնադրությամբ (կամ սահմանադրական համարժեք փաստաթղթերով կամ միավորմանը համարժեք առնչվող փաստաթղթերով) և տվյալ կազմակերպության գրանցմանն առնչվող մնացյալ անհրաժեշտ փաստաթղթերով:

4. Պատժամիջոցներ

4.1 Հայտատուի հետ պայմանագիրը չի կնքվում, եթե վերջինս տնօրենները կամ աշխատակիցները, մասնաճյուղերը, գործակալները կամ ներկայացուցիչներից որևէ մեկը.

- i. ներառված է Միացյալ Նահանգների կառավարության, Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության, Միացյալ Թագավորության, Համաշխարհային բանկի սանկցիաների ցանկում¹, կամ այլ համապատասխան պետական հաստատությունների կամ գործակալությունների ցանկում,
- ii. հանդիսանում է Պատժամիջոցների համար պատասխանատու վերոնշյալ մարմինների համար թիրախ²,
- iii. չի համապատասխանում Պատվիրատուի հակակոռուպցիոն քաղաքականությանը:

4.2 Հայտատուն, որը ենթակա է որևէ սանկցիայի³ նշված մարմինների սանկցիաների շրջանակներում, իրավունակ չէ կնքելու Պայմանագիրը:

5. Հայտերի կազմում և ներկայացում

5.1 Հայտատուն հոգում է բոլոր ծախսերը, որոնք առնչվում են Հայտի պատրաստմանն ու ներկայացմանը, իսկ Պատվիրատուն պատասխանատու չէ այդ ծախսերի համար անկախ ընտրական գործընթացի վերջնարդյունքից:

¹ Սա «Հատուկ նշանակված քաղաքացիների և արգելափակված անձանց» ցանկ է, որը տրամադրում է Օտարերկրյա ակտիվների վերահսկողության գրասենյակը (OFAC), ՄԹ ՁԳ գանձապետարանի կողմից վարվող ներդրումների արգելքի ցուցակը, կամ նմանատիպ այլ ցուցակ, որը պարունակում է հրապարակային պատժամիջոցներին առնչվող տեղեկույթ:

² «Սանկցիաների թիրախ» անձ, ում Միացյալ Նահանգները կամ Սանկցիաների մարմինն օրենքով արգելում կամ սահմանափակում է առևտրով, բիզնեսով կամ այլ գործունեությամբ զբաղվել:

³ Տնտեսական սանկցիաները, օրենքները, կանոնակարգերը, էմբարգոն կամ սահմանափակող միջոցները, որոնք կառավարվում, ուժի մեջ են մտնում կամ կիրառվում պատժիչ մարմինների կողմից:

ա) Պատվիրատուն իրավունք է վերապահում ընդունել կամ մերժել ցանկացած հայտ և լուծարել մրցութային գործընթացը և մերժել բոլոր հայտերը մինչ պայմանագրի շնորհումը ցանկացած պահի՝ պատասխանատվություն չկրելով հայտատուի նկատմամբ կամ պարտավորություն չստանձնելով հայտատուին(ներին) տեղեկացնելու Պատվիրատուի գործողությունների հիմքերի վերաբերյալ:

բ) Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում ընդունելու մրցույթի հաղթող մասնակցի կողմից ներկայացված ցանկացած շեղում:

5.2 Սույն ԱՀ-ի մասնակցության համար Մասնակիցը պետք է ներկայացնի.

1) Որակավորման տվյալներ

ա) Մասնագիտական փորձառություն

բ) Պահանջվող աշխատակազմը

գ) Ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն

դ) Էնթակապալառուներին առնչվող հիմնավորումներ

ե) տեղեկատվություն հայտի ներկայացման օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ (տեղեկանք Պետական եկամուտների կոմիտե)

զ) Աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ստուգաթերթ

զ) [ՔոնթուրԳլոբալի Երրորդ կողմի հարցաթերթիկ](#)

է) հայտի ապահովման հայտարարագիր

ը) Աշխատանքների իրականացման ժամանակացույց

2) Մրցույթը կիրականացվի մեկ փուլով, երկու փակ ծրարներով, որտեղ մասնակից ընկերությունները ներկայացնում են որակավորման չափանիշներին համապատասխանող տեղեկատվությունը և փակ ծրարով գնային առաջարկը միաժամանակ՝ օգտագործելով Coupa համակարգը: Պատվիրատուն կիրականացնի հայտերի մանրամասն տեխնիկական գնահատում՝ որոշելու, թե արդյոք ներկայացված հայտերը համապատասխանում են մրցութային փաստաթղթերում նշված տեխնիկական պահանջներին:

3) Մրցութային փաթեթի պահանջներին համապատասխանող հայտատուները կհրավիրվեն երկրորդ փուլ՝ ֆինանսական/գնային առաջարկների առցանց բացման արարողությանը Coupa համակարգում՝ հեռահար կապի միջոցով, նախապես տեղեկացված օր և ժամին:

4) Ցանկացած առաջարկ, որը կգնահատվի գնահատող հանձնաժողովի կողմից մրցութային փաթեթի և տեխնիկական պահանջներին ոչ համապատասխանող կամ ոչ բավարար՝ կմերժվի իսկ բացված գնային առաջարկը հաշվի չի առնվելու:

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակից կազմակերպությունը պետք է ներկայացնի հաջողությամբ ավարտված նմանատիպ պայմանագրեր իրականացված վերջին 3 տարվա ընթացքում, որի ծավալը կազմում է առնվազն 30 մլն ՀՀ դրամ է, առանց ԱԱՀ: Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճենները (պայմանագիր, վերջնական հանձնման և ընդունման ակտը):

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է լրացված ձև EXP-1. Մասնագիտական փորձ տեղեկատվության համաձայն.

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է լրացված ձև EXP-1. Մասնագիտական փորձ տեղեկատվության համաձայն.

Պահանջվող աշխատակազմը՝

- ինժեներ՝ ժամանակակից էլեկտրական սարքավորումների և դրանց կարգաբերման աշխատանքների կատարման որակավորմամբ՝ 3 տարի աշխատանքային փորձով:

Մասնակցի կողմից առաջարկվող անձնակազմի տեղեկատվությունը լրացվում է PER-1՝ Առաջարկվող աշխատակազմ և PER-2՝ Առաջարկվող աշխատակազմի ինքնակենսագրություններ ձևերում:

«Ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Որակավորման չափանիշներ. նվազագույն միջին տարեկան շրջանառության (եկամտի) պահանջը կազմում է 110,000,000 ՀՀ դրամ 2021, 2020, 2019 թվականներին լրացված ձև FIN-1: Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին: Կից ներկայացնել նախորդ տարվա հաշվեկշռի 1-ին և 2-րդ ձևերը, Շահութահարկի հաշվարկը, ինչպես նաև.

- տեղեկատվություն հայտի ներկայացման օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ (տեղեկանք Պետական եկամուտների կոմիտեից):

Նշված աշխատանքները դասվում են Կապալառուների Աշխատանքի Պաշտպանության Տեխնավտանգության և Շրջակա միջավայրի պահպանման կառավարման ընթացակարգի Ա դասի ռիսկայնությանը: Հաղթող ընկերությունը մինչև պայմանագրի կնքումը 10-օրյա ժամկետում պարտավոր է ներկայացնել նշված ձևաթղթերը հիմնավորող (ընթացակարգեր, քաղաքականություններ, հրահանգներ, գրանցամատյան և այլն): Չապահովելու դեպքում պայմանագիրը չի կնքվում և հաղթողի իրավունքը կարող է փոխանցվել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Ներկայացվող գնային առաջարկը (S1 Հայտի նամակ).

ա) պետք է լինի առանց ԱԱՀ,

բ) ներառի բոլոր սարքավորումների և ապրանքների տեղափոխումը Շամբ և Սպանդարյան ՀԷԿ-եր, իր որակավորված անձնակազմով և գործիքներով, տեղադրման, կարգաբերման և

ուսուցման ծախսը՝ հետևյալ հասցեներով. ՀՀ, Սյունիքի մարզ, Մխիթան համայնք, գ. Որոտնավան, Որոտան-Շամբ Խճուղի թիվ 4 հասցե, Շամբ ՀԷԿ և ՀՀ, Սյունիքի մարզ, Մխիթան համայնք, գ. Շաղաթ:

զ) Հայտատուներից պահանջվում է ներկայացնել հայտ, որը լիովին համապատասխանում է մրցութային փաստաթղթերում նշված պայմանագրային և տեխնիկական պահանջներին՝ նշելով այն գինը, որը ներառում է մրցութային փաստաթղթերում նշված բոլոր կոմերցիոն, պայմանագրային և տեխնիկական պարտավորությունների համար ծախսերը,

դ) Ապրանքների նվազագույն երաշխիքային ժամկետը պետք է լինի տեխնիկական բնութագրերի պայմանների համապատասխան,

զ) գները պետք է ամրագրվեն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում պայմանագիրը կատարվում է, եթե այն շնորհվի հայտատուին և փոփոխման ենթակա չեն որևէ մի պատճառով:

Ենթակապալառուներին առնչվող հիմնավորումներ (S2 ձև)

Աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ստուգաթերթ (S3 ձև)

ՔոնթուրԳլոբալի Երրորդ կողմի հարցաթերթիկ (S4 ձև)

Հայտի ապահովման հայտարարագիր (S5 ձև)

Աշխատանքների իրականացման ժամանակացույց (S6 ձև)

5.3 Հայտերը պետք է կազմվեն՝ հաշվի առնելով ներքոնշյալ տեղեկությունը.

ա. յուրաքանչյուր ԱՀ պետք է մանրամասն ուսումնասիրվի Հայտատուների կողմից և համապատասխանեցվի ԱՀ և Տեխնիկական Բնութագրերի պահանջներին:

բ. Բաժին II-ի Տեխնիկական Բնութագրերը կազմում են սույն ԱՀ-ի անբաժանելի մասը, իսկ առաջարկվող ապրանքների շեղումների առկայության դեպքում տեխնիկական պահանջներից, Պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է ընդունել կամ մերժել դրանք,

գ. Առաջարկի հայտում պահանջվող տեղեկատվության տրամադրման էական թերությունները կարող են հանգեցնել վերջինիս մերժմանը,

դ. Հայտատուի առաջարկը պետք է վավեր լինի առաջարկների ներկայացման ժամկետին հաջորդող 120 օրվա ընթացքում,

ե. Ընտրված մասնակիցը որոշվում է սահմանված պահանջներին համապատասխանող և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

- 5.4 Հայտերը պետք է ներկայացվեն նախքան ամրագրված վերջնաժամկետը Coupa համակարգում: Սահմանված վերջնաժամկետից ուշ ներկայացված հայտերը Coupa-ի կողմից չեն ընդունվում:
- 5.5 Հայտատուի լիազորված ներկայացուցիչը ստորագրում է բնօրինակ ներկայացման անհրաժեշտ փաստաթղթերը պահանջվող ձևաչափով՝ բոլոր էջերում դնելով ինքնագիրը: Լիազորագիրը պետք է կցված լինի հայտին:
- 5.6 Համատեղ գործունեության (կոնսորցիումի) կողմից ներկայացվող հայտը պետք է ստորագրվի բոլոր անդամների կողմից, որպեսզի իրավաբանորեն պարտադիր ուժ ունենա բոլորի համար, կամ լիազոր ներկայացուցչի կողմից, որն ունի գրավոր լիազորագիր՝ ստորագրված յուրաքանչյուր անդամի լիազոր ներկայացուցչի կողմից:

6. Հայտերի բացումը և գնահատումը

- 6.1 Հայտերի ընդունումը կիրականացվի Coupa համակարգի պայմանների համաձայն:
Հայտերի քննությանը, գնահատմանը, համեմատությանը և հետորակավորմանը և Պայմանագրի կնքմանը վերաբերող տեղեկատվությունը չպետք է բացահայտվի Հայտատուներին կամ որևէ այլ անձի, ով պաշտոնապես չի առնչվում այդ գործընթացի հետ:
- 6.2 Պատվիրատուն գնահատում է Առաջարկների համապատասխանությունը ԱՀ-ում ներկայացված տեղեկատվության ու պահանջների համաձայն:
- 6.3 Եթե Հայտատուի տրամադրած տեղեկատվությունը թերի է կամ լրացուցիչ պարզաբանման կարիք կա, և Հայտատուն չի տալիս բավարար պարզաբանում և (կամ) թերի տեղեկատվություն Պատվիրատուի պահանջով, ապա այն կարող է հանգեցնել Հայտի մերժմանը:
- 6.4 Հայտատուի կողմից առաջարկվող էական փոփոխությունները, որոնք ԱՀ-ի մաս են կազմում, չեն ընդունվում:
- 6.5 Պատվիրատուն կարող է որակագրկել ցանկացած Հայտ, որն էապես չի համապատասխանում կամ չի բավարարում ԱՀ-ի պահանջները:
- 6.6 Գնառաջարկները կուսումնասիրվեն և կգնահատվեն ըստ նվազագույն գների:
- 6.7 Պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է Հայտատուներին հրավիրել ցանկացած աճուրդի՝ Coupa համակարգի միջոցով մրցունակ գներ ստանալու նպատակով: Coupa համակարգի միջոցով առկա են երեք աճուրդների եղանակներ՝ հակադարձ անգլիական աճուրդ, հակադարձ հոլանդական աճուրդ և հակադարձ ճապոնական աճուրդ:
- 6.8 Պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է Հայտատուին/երին հրավիրել բանակցությունների մրցունակ գներ ստանալու նպատակով:

7. Պայմանագրի շնորհում

7.1 Ընտրված մասնակցի հետ կնքվում է Պայմանագիր «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան, ընտրված մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:

Մինչև պայմանագրի կնքելը հայտատուին կառաջարկվի ծանոթանալ և ընդունել ՔոնթուրԳլոբալի հակակոռուպցիոն քաղաքականությանն առնչվող փաստաթղթերին: Պատվիրատուն կարող է հրաժարվել հաղթող մասնակցի հետ պայմանագիր կնքելուց, եթե վերջինս չի համապատասխանում ՔոնթուրԳլոբալի պահանջներին և ընթացակարգերին. ըստ այդմ հաղթող մասնակցը հիմնավորված մերժում կստանա⁴:

8. Փաստաթղթերի պարզաբանումներ

Այն Հայտատուները, որոնք պահանջում են ԱՀ-ի փաստաթղթի ցանկացած պարզաբանում, իրենց հարցումները գրավոր ուղարկում են Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին, կամ Coupa-ի համակարգի միջոցով: Պատվիրատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր պատասխանում է պարզաբանումների վերաբերյալ հարցումներին: Պատվիրատուն պետք է ուղարկի իր պատասխանը, ներառյալ հարցմունքը, առանց դրա աղբյուրը բացահայտելու բոլոր այն ընկերություններին, որոնք ստացել են ԱՀ-ն Coupa համակարգի միջոցով: Պարզաբանումներ կարող են պահանջվել ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 5 օր անց:

9. Փաստաթղթային փոփոխություններ

Ցանկացած ժամանակ՝ մինչ Հայտերի ներկայացման վերջնաժամկետը, Պատվիրատուն կարող է փոփոխել ԱՀ-ն՝ դրա մասին գրավոր տեղեկացնելով: Հավելվածը կուղարկվի բոլոր հրավիրված Հայտատուներին, որը պետք է ԱՀ-ի անբաժանելի մասը կազմի:

10. Լեզու

10.1 Հայտին առնչվող բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայերեն: Այն դեպքում, երբ պաշտոնական փաստաթղթերը տրվում են այլ լեզվով, անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակ փաստաթուղթը ճշգրիտ արված հայերեն թարգմանության հետ միասին:

10.2 Փաստաթղթի լեզվական տարբերակների անհամապատասխանության դեպքում հայերենը գերակա ուժ ունի:

⁴ ՔոնթուրԳլոբալի հետ համագործակցության համար առաջին բային է՝ ընդունել և համապատասխանել Մատակարարի վարվեցողության կանոնակարգին, մեր Հակակոռուպցիոն քաղաքականության և Հակակոռուպցիոն համապատասխանության ուղեցույցին, և ՔոնթուրԳլոբալի Աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության մեր ուղեցույցին: Մատակարարների կողմից ստանձնված այդ պարտավորությունները անվիճարկելի են և հանդիսանում են համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններից:
<https://contourglobal.ent.box.com/s/gqkxq2makbfao6dakw376qq329vnmnp8>

11. Արժույթ

Գները պետք է ներկայացվեն միայն ՀՀ դրամով:

12. Գաղտնիության Պահպանում

12.1 Հայտատուները պարտավոր են չհրապարակել, չհայտարարել, թույլ չտալ ցանկացած եղանակով՝ ուղղակի կամ անուղղակի կերպով, հրապարակել, հայտարարել, կամ չարտոնված կերպով օգտագործել մրցութային գործընթացի, մրցույթին մասնակցության, կարգավիճակի հետ կապված ձեռք բերված որևէ տեղեկատվություն՝ ներառյալ Պատվիրատուի, նրա ենթակապալառուների և մատակարարների գործունեության մասին, Պատվիրատուի համար առևտրային գաղտնիք ներկայացնող որևէ տեղեկություն, ինչպես նաև տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական տեղեկատվություն, գների, նախագծերի, գործարքների և պայմանագրերի մասին տվյալներ, որոնք պատվիրատուն կնքել է, կնքում է կամ պատրաստվում է կնքել, ինչպես նաև ապրանքային նշանների, արտոնագրերի, լիցենզիաների, բիզնես նախագծերի տվյալների և գովազդային ռազմավարությունների մասին տեղեկություններ, ինչպես նաև Պատվիրատուի հետ կապված բոլոր այլ գաղտնի տվյալներ: Տեղեկատվության տարածումը և հրապարակումը կարելի է միայն այն դեպքում, եթե դա հստակորեն թույլատրված է օրենքով, Պատվիրատուի կողմից գրավոր համաձայնություն է ստացվել, կամ եթե դա բխում է տեղեկատվություն պարունակող փաստաթղթի բնույթից:

12.2 Հայտերի ուսումնասիրության, գնահատման, համեմատման և հետորակավորման ու պայմանագրի շնորհման առաջարկությանը վերաբերող տեղեկությունը չպետք է բացահայտվի Հայտատուներին կամ որևէ այլ անձի, որը պաշտոնապես չի առնչվում այդ գործընթացին մինչև Պայմանագրի շնորհման մասին տեղեկությունը չհաղորդվի բոլոր Հայտատուներին:

13. Շահերի բախում

Հայտատուները և նրանց առաջարկած ենթակապալառուները Պայմանագրի որևէ մասով չպետք է ունենան շահերի բախում: Համարվում է, որ Հայտատուն ունի շահերի բախում, եթե նրանք կամ նրանց փոխկապակցված կազմակերպությունները գտնվում են այնպիսի իրավիճակում, երբ ունեն մասնավոր կամ անձնական շահ, որը կարող է կամ ենթադրվում է, որ կարող է ազդել օբյեկտիվ մասնագիտական դատողություն անելու վրա՝ Պատվիրատուի շահերի համատեքստում: Շահերի բախումը անպայմանորեն չի ենթադրում դրամային կամ ֆինանսական գործոններ, դա կարող է լինել, երբ առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք խանգարում են կամ կարող են թվալ, թե խանգարում են որոշում կայացնողի՝ անկախ մասնագիտական դատողություններ անելու հարցում: Հայտատուի քայլերը կարող են շահերի բախման հանգեցնել, եթե նա մտերիմ գործարար կամ ընտանեկան

հարաբերություններ ունի Պատվիրատուի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության պրոֆեսիոնալ անձնակազմի հետ, որոնք՝ (i) ուղղակի կամ անուղղակիորեն ներգրավված են իրականացման կամ նման պայմանագրի վերահսկողության գործում, կամ (ii) կարող են օգուտ քաղել այդպիսի պայմանագրից, բացառությամբ այն դեպքերի, երբ նման հարաբերություններից բխող տարաձայնությունը լուծվել է Պատվիրատուի համար ընդունելի ձևով:

14. Ծախսեր

Հայտատուն է հոգում Հայտի կազմման, ներկայացման և ԱՀ-ին ընդհանուր մասնակցության բոլոր ծախսերը, Պատվիրատուի հետ պարզաբանման և բանակցային հանդիպումների, վերլուծության, տեղական պահանջների պատշաճ ուսումնասիրության, սուրհանդակային և թարգմանությանն առնչվող ծախսերը:

15. Հայտերի մերժման մասին հայտարարումը

15.1 Գնահատող հանձնաժողովը կարող է այս ԱՀ-ն մերժել/համարել ոչ բավարար, եթե՝

- 1) Հայտատուներից ոչ մեկը չի համապատասխանում ԱՀ-ի պահանջներին,
- 2) կա գնման պահանջի դադարեցման անհրաժեշտություն,
- 3) ոչ մի Առաջարկ/Հայտ չի ստացվել,
- 4) Պատվիրատուի հայեցողությամբ պայմանագիր չի կնքվում որևէ այլ պատճառով:

15.2 Ցանկացած Հայտատու, ով ցանկանում է պարզել, թե ի՞նչ հիմքերով իր առաջարկը չի ընտրվել, պետք է բացատրություն պահանջի Պատվիրատուից: Պատվիրատուն պետք է անհապաղ բացատրություն ներկայացնի, թե ինչու նման առաջարկը չի ընտրվել՝ կամ գրավոր և (կամ) ամփոփիչ հանդիպման ժամանակ՝ Պատվիրատուի ընտրությամբ: Հայտատուն իր վրա է վերցնում նման քննարկմանը մասնակցելու բոլոր ծախսերը: Քննարկման ընթացքում կարող է քննարկվել միայն հայտատուի հայտը և ոչ թե մրցակիցների հայտերը:

15.3 Սույն ԱՀ-ից բխող վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Բաժին II. Տեխնիկական բնութագրեր (կցվում է)

Բաժին III. Պայմանագրի նախագիծ (կցվում է)

Բաժին IV. Կից փաստաթղթեր/ Հավելվածներ

Բաժին IV

S1 Հայտի ձև

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆԱՄԱԿ

Ամսաթիվ՝

Պայմանագրի անվանումը՝ ՔԳՀԿ 16/22՝

Հասցեագրված՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, ք. Գորիս, Գր Տաթևացու 2

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք,

Մենք՝ ներքոստորագրյալներս, ներկայացնում ենք մեր հայտը՝ ՔԳՀԿ 16/22՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի **«10ԿՎ գծային բաժանիչների մատակարարման և տեղադրման» աշխատանքների ձեռքբերման** մրցույթի համար, 2022 թ. ----- -ի դրությամբ Ձեր կողմից արված Առաջարկի Հարցման համաձայն:

Ուսումնասիրելով մրցութային փաստաթղթերը, ներառյալ Հավելվածները, որոնց ստացումը սույնով հաստատվում է՝ մենք՝ ներքոստորագրյալներս, առաջարկում ենք մատակարարել և տեղադրել, վերոնշյալ Պայմանագրում նշված սարքավորումները/ապրանքները՝ լիովին համապատասխանելով տվյալ մրցութային փաստաթղթերի պահանջներին և գումարի չափին.

(գումարը տառերով)

.....(.....)
(գումարը թվերով)

կամ այլ այդպիսի ծախսեր, որոնք կարող են որոշվել Պայմանագրի դրույթներին և պայմաններին համապատասխան: Վերոնշյալ գումարները համապատասխանում են սույն գների Ցանկին և սույն հայտի մաս են կազմում:

Սույնով ներկայացնում ենք մեր հայտը աշխատանքների իրականացման վերաբերյալ և հավաստում, որ

(ա) Մենք մանրամասն ուսումնասիրել ենք Հայտի («ԱՀ») փաստաթուղթը: Մենք ընդունում ենք Առաջարկի հրահանգներն ու պայմանները առանց առարկությունների: Մենք առաջարկում ենք կատարել պայմանագիրը համաձայն ԱՀ-ի փաստաթղթի:

բ) Մեր Առաջարկը (հայտը) կազմված է համաձայն ԱՀ-ի պահանջների

(գ) Մենք հաստատում ենք, որ կարդացել և հասկանում ենք Պատվիրատուի Հակակոռուպցիոն քաղաքականությունը և Մատակարարի վարվեցողության

կանոնակարգը (համատեղ օգտագործմամբ՝ «Քաղաքականություն»): Մենք համաձայնում ենք հետևել Քաղաքականությանը և վերանայել դրանց պայմանները նախքան ներգրավվելը որևէ գործողության մեջ, որը կարող է չհամապատասխանել Քաղաքականությանը: Քաղաքականության շրջանակներում ցանկացած խնդրի վերաբերյալ հարցի առկայության դեպքում, մենք դրանք կուղղենք Պատվիրատուի Գլխավոր խորհրդականին վերանայման համար՝ նախքան որևէ նման գործարքի կամ գործունեության մեջ ներգրավվելը:

(դ) մեր գործունեությունը 1) չի հակասում Կաշառակերության դեմ օրենքին, 2) չի հակասում Քաղաքականությունում նշված որևէ իրավիճակի:

(ե) Մենք, մեր մյուս ենթակապալառուների, մատակարարների, խորհրդատուների, կամ ծառայություն մատուցողների հետ մեկտեղ, ովքեր պայմանագրի կատարման մաս են կազմում, ենթակա չենք և չենք վերահսկվում որևէ կազմակերպության կամ անհատի կողմից, որը ենթակա է ժամանակավոր կասեցման կամ արգելքի Պատժամիջոցների՝ Միացյալ Նահանգների կառավարության, ՄԱԿ-ի, Եվրոպական միության, Միացյալ Թագավորության, Համաշխարհային բանկի կամ վերը նշվածներից որևէ մեկի համապատասխան կառավարական հաստատությունների կամ գործակալությունների կողմից:

(զ) ոչ իրավունակ չենք Պատվիրատուի երկրի օրենքների կամ պաշտոնական կանոնակարգերի մասով կամ համաձայն Միացյալ Նահանգների կառավարության, ՄԱԿ-ի, Եվրամիության, Միացյալ Թագավորության, Համաշխարհային բանկի կամ վերը նշվածներից որևէ մեկի համապատասխան պետական հաստատությունների կամ գործակալությունների որոշման:

(է) Չունենք Շահերի բախում:

(ը) Մեր հայտը ուժի մեջ կմնա 120 օր և կունենա պարտադիր ուժ մեզ համար և կարող է ընդունվել ցանկացած ժամանակ մինչ վավերականության ժամկետի ավարտը:

(թ) Մենք հասկանում ենք, որ դուք պարտավոր չեք ընդունել այն հայտերը, որոնք որ ստանում եք:

Հայտում առկա ողջ տեղեկությունը, հայտարարությունները և նկարագրությունը բոլոր առումներով ճիշտ են, ճշգրիտ և ամբողջական՝ մեր գիտելիքների և համոզմունքների շրջանակներում:

Հարգանքով՝

Ստորագրություն՝

Ստորագրողի անուն, պաշտոն՝ _____

Հայտատուի անվանումը՝ _____

Հասցե՝ _____

Ամսաթիվ՝ _____

S2 Ենթակապալառուներ ներգրավելու մասին հայտարարություն

Ամսաթիվ՝ [մուտքագրեք օրը, ամիսը և տարին]

Առաջարկի հարցման համարը և անվանումը [մուտքագրեք

ԱՀ-ի համարը և անվանումը]

Մենք, ներքոստորագրյալներս, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի «10կՎ գծային բաժանիչների մատակարարման և տեղադրման» աշխատանքների իրականացման համար համաձայն 2022 թ. ----- -ի Ձեր կողմից արված Առաջարկի Հարցմանն ի պատասխան մեր կողմից ներկայացված հայտի հետ կապված՝

հայտարարում ենք, որ

1. Պայմանագրի կատարման ընթացքում մենք _____ ենթակապալառու/ներ
(ներգրավելու ենք/չենք
ներգրավելու)
2. Պայմանագրի կատարման ընթացքում մենք օգտվելու ենք հետևյալ ենթակապալառուների ծառայությունից:

Ենթակապալառու (անունը և հասցեն)	Գործունեության տեսակը, որը պետք է իրականացվի (խնդրում ենք նշել գործունեության տեսակը)	Բաժնեմաս (ենթակապալառուի մասնակցության տոկոսը պայմանագրի ընդհանուր գնից)

[Ծանոթագրություն. Աղյուսակը լրացվում է միայն այն դեպքում, եթե Հայտատուն հայտարարում է ենթակապալառու/ներ ներգրավելու մասին:]

Հարգանքով՝

Լիազորված անձի ստորագրություն՝

Ստորագրողի անունը և պաշտոնը՝

Հայտատուի անունը՝

Հասցե՝

Ամսաթիվ՝

S3 Աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ստուգաթերթիկ
Հայտատուն պետք է լրացնի հետևյալ աղյուսակը՝

		Այո	Ոչ	Հղում	ՔոնթուրԳ լոբալի օգտագործ ման համար
1	Երրորդ կողմի ԱՊՏԱ (Աշխատանքի պաշտպանություն և տեխնիկական անվտանգություն) հավաստագրում				
	Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի հավաստագրված կամ հավատարմագրված ԱՊՏԱ համակարգ: (օրինակ՝ OHSAS 18001)				
	Եթե ԱՅՈ , կցե՞ք վկայագրի պատճենը կամ համապատասխանության նամակները և անցե՞ք 2-րդ հարցին				
	Եթե ՈՉ , անցե՞ք 3-րդ հարցին և լրացրե՞ք ստուգաթերթիկի բոլոր հարցերը:				
2	Երրորդ կողմի բնապահպանական հավաստագրում				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի նաև հավաստագրված կամ հավատարմագրված բնապահպանական համակարգ: (օրինակ՝ ISO 14001)</i>				
	Եթե ԱՅՈ , կցե՞ք վկայագրի պատճենը կամ համապատասխանության նամակը Անցե՞ք 16-րդ հարցին				

	Եթե ՈԶ, անցեք հարց 3-ին և պատասխանեք ՄԻԱՅՆ ձեր Բնապահպանական համակարգին վերաբերող հարցերին: Մի պատասխանեք “v” նշանով նշված հարցերին:				
3	Ընկերության Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականություն				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականություններ, այդ թվում՝ հանձնառություն հետևյալի նկատմամբ՝</i>				
	· Ռիսկերի կառավարման գործընթաց				
	v Արտադրական վնասվածքների հետաքննություն				
	· Նպատակների հստակ ձևակերպում				
	· ԱՊՏԱ և ՇՄՊ (Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և Շրջակա միջավայրի պահպանության) դասընթաց				
	· ԱՊՏԱ և ՇՄՊ խորհրդատվություն				
	· Կատարողականի բարելավման հանձնառություն				
	· Աղտոտման կանխարգելում				
	· Կիրառելի իրավական պահանջներին համապատասխանելու հանձնառություն				

	<ul style="list-style-type: none"> Արդյո՞ք ԱՊՏԱ և ՇՄՊ քաղաքականությունները ստորագրված են Գլխավոր գործադիր տնօրենի կամ հավասարազոր պաշտոն զբաղեցնող անձի կողմից 				
	<ul style="list-style-type: none"> Արդյո՞ք ԱՊՏԱ և ՇՄՊ քաղաքականությունները վերանայվում են պարբերաբար 				
4	Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և Շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող պարտավորություններ				
	<i>Արդյո՞ք Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և Շրջակա միջավայրի պահպանությանը (ԱՊՏԱ և ՇՄՊ) վերաբերող պարտականությունները փաստաթղթավորված են և ներառու՞մ են.</i>				
	<ul style="list-style-type: none"> ԱՊՏԱ և ՇՄՊ պարտավորությունների վերաբերյալ հայտարարություններ 				
	<ul style="list-style-type: none"> Արդյո՞ք դրանք աշխատակիցների աշխատանքի նկարագրության մաս են կազմում: 				
	<ul style="list-style-type: none"> Արդյո՞ք դրանք պաշտոնական և ոչ պաշտոնական կատարողականի գնահատման մաս են կազմում: 				
	<ul style="list-style-type: none"> Արդյո՞ք անմիջական ղեկավարները և ստորին օղակի ղեկավարները պաշտոնապես պատասխանատու են իրենց աշխատողների աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության կատարողականի համար: 				

5	Ռիսկերի կառավարում				
	<i>Արդյո՞ք ձեր ընկերության ռիսկերի կառավարման գործընթացները հստակ սահմանում են ընթացակարգեր հետևյալի համար՝</i>				
	• Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և բնապահպանական վտանգների բացահայտում, ռիսկերի գնահատում և ռիսկերի վերահսկման միջոցների մշակում				
	• Ռիսկերի վերահսկման ամենաարդյունավետ միջոցների ընտրություն				
	• Պատահարի կամ հիվանդության/վնասվածքի դեպքում Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության հետ կապված հարցերի լուծում				
	• Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության հետ կապված աշխատանքների իրականացման պլանի մշակում և իրականացում				
	• Ծառայություն մատուցողների աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության հետ կապված աշխատանքների իրականացման պլանի վերանայում				
	• Աշխատավայրում ԱՊՏԱ վնասվածքների կառավարման և աշխատողների փոխհատուցման համապատասխան օրենսդրությանը, չափանիշներին և				

	օրենսգրքին համապատասխանության ապահովում				
	· Տեղամասի անվտանգության և բնապահպանական կանոնների մշակում:				
	Վերապատրաստում				
	<i>Ձեր ընկերության վերապատրաստման ընթացակարգերը՝</i>				
	· Բացահայտում են ղեկավարության, անմիջական ղեկավարների և աշխատակիցների կարիքները:				
	· Ապահովում են աշխատողներին, մատակարարման շղթայի ծառայություններ մատուցողներին և աշխատանքային տեղամաս այցելուներին համապատասխան հրահանգավորմամբ:				
6	· Ապահովում են ողջ անձնակազմի համար համապատասխան գործունեության վերաբերյալ վերապատրաստում և անվտանգության տեխնիկայի մասով կրկնակի հրահանգավորում:				
	· Ներառում են խորհրդատավական դասընթաց ԱՊՏԱ և ՇՄՊ հանձնաժողովի և ԱՊՏԱ և ՇՄՊ ներակայացուցիչների համար:				
	· Ներառում են դասընթաց արտակարգ իրավիճակներում գործելու համար:				
	· Պահանջում են պահպանել համապատասխան արձանագրություններ ԱՊՏԱ և ՇՄՊ դասընթացների վերաբերյալ:				
7	Ստուգումներ, փորձարկումներ և սպասարկում				

<p><i>Ձեր ընկերությունն ունի՞ ստուգումների, փորձարկման և սպասարկման ընթացակարգեր, որոնք պահանջում են՝</i></p>				
<p>• Մշակել և պահպանել բոլոր նախագծերի համար (նախքան աշխատանքի մեկնարկը) ստուգումների, փորձարկումների և սպասարկման ժամանակացույց՝ հիմնված ռիսկի մակարդակի վրա:</p>				
<p>• Պահպանել ստուգումների, փորձարկման և սպասարկման վերաբերյալ արձանագրություններ:</p>				
<p><i>Արդյո՞ք Ձեր ընկերությունում առկա են ընթացակարգեր, որոնք սահմանում են ստուգումների, և անհրաժեշտության դեպքում՝ փորձարկման և սպասարկման պահանջները՝ կապված հետևյալի հետ՝</i></p>				
<p>• Մուտքային ապրանքներ՝ նյութեր, մեքենաներ և սարքավորումներ</p>				
<p>• Տեղամասի աշխատանքային միջավայր</p>				
<p>• Ընդհանուր աշխատանքային մեթոդներ</p>				
<p>v Մուտք ու ելքեր</p>				
<p>• Վտանգի և ռիսկերի վերահսկման միջոցառումներ</p>				
<p>• Տեղամասի անվտանգության և բնապահպանական կանոնների պահպանում</p>				
<p>v Էլեկտրական անվտանգություն</p>				
<p>• Կայանք և սարքավորումներ</p>				
<p>• Ձեռնարկված ստուգումների տեսակները</p>				

8	Պատահարների կառավարում և ուղղիչ/կանխարգելիչ գործողություններ				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի ընթացակարգեր հետևյալի համար՝</i>				
	• Անհամապատասխան և համապատասխանության պահանջները չբավարարող խնդիրների և պատահարների հայտնաբերում և փաստաթղթավորում				
	• Անհամապատասխան նյութերի կարանտինացում և հեռացում				
	<i>Արդյո՞ք հստակ ցույց է տրված, թե ինչպես է կազմակերպությունը տեղեկատվություն տրամադրելու խնդիրների և ուղղիչ գործողությունների մասին՝</i>				
	• Ամբողջ կազմակերպությունում				
	• Պատվիրատուներին				
	• Ծառայություններ մատուցողներին				
	• Համապատասխան մարմիններին, այդ թվում՝ հիվանդության/վնասվածքի մասին ծանուցում:				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի ընթացակարգեր, որոնք հստակ սահմանում են պահանջներ հետևյալի նկատմամբ՝</i>				
	• Պատահարների/հիվանդության/վնասվածքի մասին զեկուցում և հետաքննություն				

	(ներառյալ բնապահպանական պատահարները)				
	· Ուղղիչ գործողությունների իրականացում				
	· Ուղղիչ գործողությունների կարգավիճակի մշտադիտարկում և արձանագրությունների պահպանում				
	v Վնասվածքների կառավարման և աշխատանքի վերադարձի պլանների իրականացում:				
9	Գործածում, պահեստավորում, փաթեթավորում և առաքում				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի ընթացակարգեր հետևյալի համար՝</i>				
	v Վտանգավոր գործընթացներում ներգրավված անձանց համապատասխան լիցենզավորում, սերտիֆիկացում և որակավորում				
	v Կայանի և կայանի նախագծով պահանջվող գրանցման պահանջների համապատասխանության ստուգում				
	v Արտադրանքների, ներառյալ վտանգավոր նյութերի և վտանգավոր ապրանքների անվտանգ գործածում և պահեստավորում				
	v Մեխանիկական բեռնաթափման հետ կապված ռիսկերի գնահատում և վերահսկում				
	v Վտանգավոր նյութերի և վտանգավոր ապրանքների նույնականացում՝ համապատասխան մակնշման միջոցով				
	v Վտանգավոր նյութերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում				

	<p>v Վտանգավոր նյութերի գրանցամատյանի վարում և վտանգավոր նյութերի ռիսկերի գնահատման հետ կապված արձանագրություններ:</p>				
10	Թափոնների կառավարում				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի ընթացակարգեր հետևյալի համար՝</i>				
	· Վտանգավոր թափոնների կառավարում				
	· Ոչ վտանգավոր թափոնների կառավարում				
11	Անհատական պաշտպանության միջոցներ				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի ընթացակարգեր, որոնք սահմանում են պահանջներ հետևյալի համար՝</i>				
	v Անհատական պաշտպանության միջոցներ (տեխնիկական բնութագիր, դասընթաց, տրամադրում)				
12	Ենթակապալառուներ				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի ընթացակարգեր հետևյալի համար՝</i>				
	· Կապալառուների կառավարում (ընտրություն, ներգրավում, մշտադիտարկում)				
13	Ներքին վերանայումներ				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի ԱՊՏԱ և ՇՄՊ գործունեության և կառավարման պլանների համակարգված վերանայման (ներառյալ աուդիտի) ընթացակարգերը, այդ թվում՝</i>				
	· Վերանայումների իրականացում կանոնավոր պարբերականությամբ				

	<ul style="list-style-type: none"> · ԱՊՏԱ և ՇՄՊ կառավարման համակարգի և պլանների թերությունների բացահայտում 				
	<ul style="list-style-type: none"> · Վերանայումների/ստուգումների փաստաթղթավորում 				
	<ul style="list-style-type: none"> · Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության կառավարման համակարգին և պլաններին համապատասխանության ապահովման և իրականացման վերաբերյալ պարբերական աուդիտների անցկացում 				
	<ul style="list-style-type: none"> · Ուղղիչ գործողությունների իրականացում 				
	<ul style="list-style-type: none"> · Հետագա ընթացակարգերի իրականացում՝ ցանկացած ուղղիչ գործողության արդյունավետությունը գնահատելու համար: 				
14	Փաստաթղթեր և արձանագրություններ				
	<i>Արդյո՞ք Ձեր ընկերությունն ունի՝</i>				
	<ul style="list-style-type: none"> · Փաստաթղթերի վերահսկման ընթացակարգեր՝ Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության վերաբերող փաստաթղթերի և տվյալների համար 				
	<ul style="list-style-type: none"> · Արձանագրությունների կառավարման ընթացակարգեր՝ Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանությանը (ԱՊՏԱ և ՇՄՊ) վերաբերող արձանագրությունների պահպանման համար 				

· Հրահանգավորման և վերապատրաստման վերաբերյալ արձանագրություններ				
· Հմտությունների, կարողությունների և լիցենզիաների գրանցամատյան				
· Ռիսկերի գնահատումներ				
v Պատահարների/վնասվածքների/հիվանդության գրանցամատյան				
v Պատահարների հետաքննության վերաբերյալ հաշվետվություններ				
v Պատահարների/վնասվածքների/հիվանդության վիճակագրություն				
· Կայանի և սարքավորումների տեխնիկական սպասարկման, փորձարկման, սպասարկման և վերանորոգման վերաբերյալ արձանագրություններ				
· Վտանգավոր նյութերի օգտագործման հետ կապված առողջության մոնիթորինգի վերաբերյալ արձանագրություններ				
· Ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ				
· Վերապատրաստման մատրիցա				
· Ներքին ստուգումների վերաբերյալ հաշվետվություններ				
· ԱՊՏԱ և ՇՄՊ աուդիտի հաշվետվություններ				

	<p>v Վնասվածքների կառավարման վերաբերյալ արձանագրություններ</p>				
	<p>· Ուղղիչ գործողությունների վերաբերյալ արձանագրություններ</p>				
15	<p>Տեղամասին հատուկ Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի կառավարման պլաններ</p>				
	<p>Խնդրում ենք տրամադրել տեղամասին հատուկ Աշխատանքի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի կառավարման պլանները, որոնք ներառում են՝</p>				
	<p>· Ռիսկերի կառավարում</p>				
	<p>· ԱՊՏԱ և ՇՄՊ պարտավորությունների վերաբերյալ հայտարարություն</p>				
	<p>· ԱՊՏԱ և ՇՄՊ դասընթաց</p>				
	<p>· Պատահարների կառավարում</p>				
	<p>· Տեղամասի անվտանգության և բնապահպանական ընթացակարգեր</p>				
	<p>· Աշխատանքների անվտանգ կատարման պլան</p>				
	<p><i>Արդյո՞ք կցված է տվյալ տեղամասին հատուկ ԱՊՏԱ և ՇՄՊ պլանը:</i></p>				
16	<p>Տեխնիկական անվտանգության և բնապահպանական կատարողական</p>				
	<p>Խնդրում ենք տրամադրել Ձեր ընկերության վերջին երեք տարիների ընթացքում ԱՊՏԱ և ՇՄՊ կատարողականի վերաբերյալ</p>				

	արձանագրություններ, որոնք առնվազն ներառում են՝				
	· Ժամանակի կորստով պատահարների հաճախականության ցուցանիշը				
	· Վնասվածքների հաճախականության ցուցանիշը				
	· Բնապահպանական պատահարներ (որոնք պետք է զեկուցվեն տեղական կարգավորող մարմնին)				
	Վերջին 3 տարվա ընթացքում Ձեր ընկերությունը տուգանվե՞լ է շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրական պահանջները խախտելու համար:				
	Եթե ԱՅՈ, խնդրում ենք տրամադրել մանրամասներ				
	<i>Արդյո՞ք արձանագրությունները և մանրամասները կցված են:</i>				
	Ստուգաթերթի լրացման ամսաթիվը և ստացված համապատասխան փաստաթղթերը				
	Վերանայման ամսաթիվը				
	Ում կողմից է վերանայվել				
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ				

	Բավարար				

☐ Բավարար՝ ստորև ներկայացված պայմաններին հետևելու պայմանով

☐ Անբավարար (տե՛ս ստորև ներկայացված մեկնաբանությունները)

Պայմաններ՝

Մեկնաբանություններ՝

Անուն՝

Պաշտոն՝

Հայտատու՝

Ամսաթիվ՝

S4 Երրորդ կողմի հարցաթերթիկ

մուտք գործեք և ներբեռնեք այստեղից՝

<https://contourglobal.box.com/s/1k5n7aagazd291kq1yj591ymwldu21bv>

S5 ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎ

: [նշել ամսաթիվը (օր, ամիս և տարի հաջորդականությամբ)]

Հայտ No.: /.....]

Ում: «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ին

Մենք՝ ներքոստորագրյալներս, հայտարարում ենք, որ հասկանում ենք, որ ձեր պայմանների համաձայն՝ հայտերը պետք է համապատասխանեն և ապահովված լինեն Հայտերի ապահովման հայտարարագրով:

Մենք ընդունում ենք, որ սկսած **3 տարի** ժամկետով «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-
«10ԿՎ գծային բաժանիչների մատակարարման և տեղադրման» աշխատանքների ձեռքբերման հետ ցանկացած պայմանագրում մեզ ինքնաբերաբար կկասեցվի մրցութային իրավունքը, եթե մենք խախտենք մեր պարտավորությունը (ներ)՝ համաձայն հայտի պայմանների, քանի որ մենք.

(ա) հրաժարվել ենք մեր առաջարկից Հայտի վավերականության ժամկետի ընթացքում, որը նշված է Ներկայացման Նամակում. կամ

(բ) Հայտի իրականացման ընթացքում, ծանուցված լինելով մեր Հայտի ընդունման մասին, (i) չենք կատարել կամ հրաժարվել ենք Պայմանագրի կատարումից, կամ (ii) չենք ապահովել կամ հրաժարվել ենք Կատարման Երաշխիքի ապահովումից:

Մենք հասկանում ենք, որ այս հայտի ապահովման հայտարարագրի ժամկետը կավարտվի, եթե մենք չճանաչվենք հաղթող մասնակից նախքան՝ (i) հաղթող մասնակցի անվան մասին ձեր ծանուցումը ստանալը, կամ (ii) մեր Հայտի գործողության ժամկետից քսանութ օր հետո:

Ստորագրություն: [այն անձի ստորագրությունը, ում անունն ու պաշտոնը նշված է] ի պաշտոնե [հայտի ապահովման հայտարարագիրը ստորագրող անձի իրավունակությունը]

Անուն [հայտի ապահովման հայտարարագիրը ստորագրող անձի անուն, ազգանունը]

Պատշաճ կերպով լիազորված է [Հայտատուի անուն, ազգանուն]

Թվագրված _____, _____ [նշել ստորագրման ամսաթիվը]

Կազմակերպության կնիք (համապատասխան տեղում)

Համատեղ գործունեության դեպքում հայտի ապահովման մասին հայտարարությունը պետք է լինի Հայտը ներկայացնող Համատեղ գործունեության բոլոր գործընկերների անունով:]

S6 Աշխատանքների իրականացման ժամանակացույց

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N°	Աշխատանքների ցանկ	Շաբաթ											
		1	2	3	4	5	6	7	8	9	n	Ընդամենը

ձև FIN -1: Ֆինանսական կատարողական

Յուրաքանչյուր Հայտատու պետք է լրացնի այս ձևը:

Համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում Համատեղ գործունեության (կոնսորցիումի) յուրաքանչյուր գործընկեր պետք է առանձին լրացնի այս ձևը և ստորև ներկայացնի Համատեղ գործունեության գործընկերոջ անունը.

Համատեղ գործունեության գործընկեր՝ _____

Նախորդ 3 տարվա ֆինանսական տվյալներ ՀՀ դրամ		
2019 թ.	2020 թ.	2021 թ.

Տեղեկություն Հաշվեկշռից

Ընդհանուր Ակտիվներ (ԸԱ)			
Ընդհանուր պարտավորություններ (ԸՊ)			
Զուտ Արժեք = ԸԱ – ԸՊ			
Ընթացիկ ակտիվներ (ԸԹԱ)			
Ընթացիկ պարտավորություններ (ԸԹՊ)			
Աշխատանքային կապիտալ = ԸԹԱ - ԸԹՊ			

Ամենավերջին շրջանառու կապիտալը		
--------------------------------	--	--

Տեղեկություն Եկամուտի Հաշվետվությունից

Ընդհանուր եկամուտներ			
Շահույթը՝ առանց հարկերի			
Շահույթը՝ հարկերով			
<input type="checkbox"/> Կից ներկայացնում ենք վերջին 3 տարիների ֆինանսական հաշվետվությունների (հաշվեկշիռները՝ ներառյալ բոլոր առնչվող ծանոթագրությունները, և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները) պատճենները, ինչպես նշված է վերևում, որոնք համապատասխանում են տվյալ պայմաններին:			

- Այս բոլոր փաստաթղթերն արտացոլում են իրավաբանական անձի կամ Հայտը կազմողի ֆինանսական վիճակը:
- Ֆինանսական հաշվետվությունները (ներառյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները) պետք է աուդիտի ենթարկվեն լիազորված հաշվապահի կողմից: Այն դեպքում, երբ Հայտատուների կառավարման տեղական օրենսդրությամբ Հայտատուի համար աուդիտի պահանջ չկա, պետք է ներկայացվեն կանոնադրական ֆինանսական հաշվետվություններ:

Հայտատուի որակավորումը

Պայմանագիրը կատարելու համար իրենց որակավորումը հաստատելու համար Հայտատուները պետք է ստորև ներկայացված համապատասխան տեղեկատվական թերթիկներում տրամադրեն պահանջվող տեղեկատվությունը:

Ձև ELI -1-ին՝ Հայտատուի տեղեկատվական թերթիկ

Հայտատուի վերաբերյալ տեղեկություններ	
Հայտատուի իրավաբանական անվանումը	
Համատեղ գործունեության դեպքում յուրաքանչյուր գործընկերոջ իրավաբանական անվանումը	
Հայտատուի գրանցման երկիրը	
Հայտատուի գրանցման տարին	
Հայտատուի իրավաբանական հասցեն գրանցման երկրում	
Հայտատուի լիազորված ներկայացուցչի տվյալները (անունը, հասցեն, հեռ. համարները, ֆաքսի համարները, էլ. փոստի հասցեն)	
<p>Կցված են հետևյալ փաստաթղթերի պատճենները:</p> <p><input type="checkbox"/> 1. Մեկ անձի դեպքում վերը նշված իրավաբանական անձի հիմնադրման փաստաթղթերի կամ կանոնադրության օրինակները:</p> <p><input type="checkbox"/> 2. Վերոնշյալ ընկերությունը կամ համատեղ գործունեությունը ներկայացնելու լիազորություն:</p> <p><input type="checkbox"/> 3. Համատեղ գործունեության դեպքում՝ Համատեղ գործունեության համաձայնագիր կնքելու մտադրության մասին նամակ:</p>	

Ձև ELI – 2րդ՝ Տեղեկատվական թերթիկ համատեղ գործունեության (կոնսորցիումի) մասին

Համատեղ գործունեության յուրաքանչյուր անդամ և մասնագետ ենթակապալառու պետք է առանձին լրացնեն այս ձևաթուղթը:

Համատեղ գործունեության/մասնագետ ենթակապալառուի վերաբերյալ տեղեկություններ	
Հայտատուի իրավաբանական անվանումը	
Համատեղ գործունեության գործընկերոջ կամ մասնագետ ենթակապալառուի իրավաբանական անվանումը	
Համատեղ գործունեության գործընկերոջ կամ մասնագետ ենթակապալառուի գրանցման երկիրը	
Համատեղ գործունեության գործընկերոջ կամ մասնագետ ենթակապալառուի գրանցման տարին	
Համատեղ գործունեության գործընկերոջ կամ մասնագետ ենթակապալառուի իրավաբանական հասցեն հիմնադրման երկրում	
Համատեղ գործունեության գործընկերոջ կամ մասնագետ ենթակապալառուի լիազորված ներկայացուցչի վերաբերյալ տեղեկատվություն (անուն, հասցե, հեռախոսահամար, Ֆաքս, Էլ. փոստ,)	
Կցված են հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ <input type="checkbox"/> 1. Վերոնշյալ իրավաբանական անձի հիմնադրման փաստաթղթերի կամ կանոնադրության օրինակները: <input type="checkbox"/> 2. Վերոնշյալ ընկերությունը ներկայացնելու լիազորություն:	

Մասնագետ ենթակապալառուն մասնագիտացված ձեռնարկություն է, որը զբաղվում է բարձր մասնագիտացված գործընթացներով, որոնք չեն կարող տրամադրվել հիմնական Կապալառուի կողմից:

ձև LIT-1. Սպասվող/առկա դատավարություն և արբիտրաժ

Յուրաքանչյուր Հայտատու պետք է լրացնի այս ձևը, որպեսզի նկարագրի իր դեմ պաշտոնապես սկսված ցանկացած առկա դատավարություն կամ արբիտրաժ:

Համատեղ գործունեության դեպքում, Համատեղ գործունեության յուրաքանչյուր գործընկեր պետք է առանձին լրացնի այս ձևը և ստորև ներկայացնի Համատեղ գործունեության գործընկերոջ անունը.

Համատեղ գործունեության գործընկեր _____

Սպասվող/առկա դատավարություն և արբիտրաժ			
<p>Ընտրեք սրանցից մեկը.</p> <p><input type="checkbox"/> Սպասվող դատավարություն և արբիտրաժ չկա:</p> <p><input type="checkbox"/> Ստորև ներկայացված է Հայտատուի մասնակցությամբ բոլոր առկա դատավարությունների և արբիտրաժների նկարագրությունը (կամ Համատեղ գործունեության յուրաքանչյուր անդամ, եթե Հայտատուն համատեղ գործունեություն է):</p>			
Տարի	Տարաձայնության պատճառը	Սպասվող արժեքը ՀՀ դրամ	Հայտատուի ֆինանսական առաջարկում ներկայացված պահանջի արժեքը

ձև EXP-1. Մասնագիտական փորձ

Լրացրեք մեկ (1) օրինակ յուրաքանչյուր պայմանագրի համար:

Նմանատիպ չափ և բնույթ ունեցող պայմանագիր		
... Ընդհանուր ... պայմանագրերից	Պայմանագրի նույնականացում	
Կնքման ամսաթիվ	Ավարտ	
Պայմանագրերի ընդհանուր թիվ		
Եթե գործընկեր է Համատեղ գործունեությունում կամ ենթակապալառուում, նշեք մասի ընդհանուր գումարը պայմանագրում	Ընդհանուր տոկոսը	Գումար
Պատվիրատուի անունը Հասցեն Հեռ/Ֆաքսի համարը Էլ. հասցե		
Նմանության նկարագրությունը		

Համապատասխան որակավորում ունեցող անձնակազմ

No.	Պաշտոն	Ընդհանուր աշխատանքային փորձ [տարիներ]	Նմանատիպ աշխատանքներ կատարելու փորձ [տարիներ]
1			
2			

ձև PER-1-՝ Առաջարկվող աշխատակազմ

Հայտատունն պետք է ներկայացնի առաջարկվող անձնակազմի վերաբերյալ մանրամասներ և նրանց փորձառության վերաբերյալ տեղեկություններ ստորև ներկայացված համապատասխան տեղեկատվական ձևաթղթերում՝ յուրաքանչյուր թեկնածուի համար:

1.	Պաշտոնի անվանումը*
	Անուն
2.	Պաշտոնի անվանումը*
	Անուն

ձև PER- 2՝ Առաջարկվող աշխատակազմի ինքնակենսագրություններ

Հայտատունն պետք է տրամադրի ստորև պահանջվող բոլոր տեղեկությունները: Յուրաքանչյուր պաշտոնի համար օգտագործեք մեկ ձևաթուղթ:

Պաշտոն		
Անձնակազմի մասին տեղեկատվություն	Անուն	Ծննդյան ամսաթիվ

	Մասնագիտական որակավորումներ	
Ներկա աշխատանքը	Պատվիրատուի անունը	
	Պատվիրատուի հասցեն	
	Հեռախոս	Կոնտակտային անձ (ղեկավար, կադրերի բաժնի աշխատակից)
	Ֆաքս	Էլ. փոստ
	Պաշտոնի անվանումը	Ներկայիս գործատուի հետ աշխատած տարիները

Ամփոփ ներկայացրեք աշխատանքային փորձը հակառակ ժամանակագրական հաջորդականությամբ: Խնդրում ենք նշել տվյալ ծրագրին առնչվող տեխնիկական ոլորտում և ղեկավար պաշտոններում աշխատելու փորձը:

Ումից	Ում	Ընկերություն/Ծրագիր/Պաշտոն/Համապատասխան տեխնիկական ոլորտում և ղեկավար պաշտոններում աշխատելու փորձ

Աշխատանքների կատարման Պայմանագիր №	Contract of Works №
Սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքվել է ք. _____-ում, 2022թ. -ի _____/_____-ին հետևյալ կողմերի միջև՝	This Contract (hereinafter referred to as the “Contract”) is executed in _____, on _____/_____, 2022 by and between
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Արա Հովսեփյանի, ով գործում է կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և	“ContourGlobal Hydro Cascade” CJSC, represented by Ara Hovsepyan in his capacity of General Manager, acting on the authorities given to him by the Company Charter, hereinafter referred to as Client, and
«_____» ՍՊԸ, ի դեմս տնօրեն _____, ով գործում է կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների հիման վրա (այսուհետ՝ Կապալառու) հետևյալի մասին.	“_____” LLC, represented by _____, in his capacity of Director, acting on the authorities given him by the Company Charter, hereinafter referred to as Contractor, for the following:
Սահմանումներ	Definitions
<p>Աշխատանք՝ ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 1.1 կետում.</p> <p>Տեխնիկական բնութագիր՝ Աշխատանքի կատարմանը Պատվիրատուի կողմից ներկայացվող և պարտադրվող տեխնիկական պահանջներ և պայմաններ, որոնք սահմանված են Հավելված 2-ում.</p> <p>Նախահաշիվ – Աշխատանքի մանրամասն ֆինանսական բացվածք նկարագրված Հավելված 3-ում</p> <p>Գաղտնի Տեղեկատվություն (առևտրային գաղտնիք)՝ անկախ ձևից Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեխնիկական, ֆինանսական, կազմակերպչական, առևտրային և Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվություն, որը անհայտ է երրորդ անձանց և Պատվիրատուն միջոցներ է ձեռնարկում այդ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:</p> <p>Փոխկապակցված անձ նշանակում է ցանկացած անձ, որը ուղղակիորեն կամ</p>	<p>Work – as defined in Clause 1.1 of this Contract.</p> <p>Technical Specification – technical requirements and conditions submitted and mandated by the Client for performance of the Work defined in Annex 2;</p> <p>Bill of Quantity – detailed price breakdown of the Work defined in Annex 3</p> <p>Confidential Information (trade secret) - regardless of the form any technical, financial, organizational, commercial and any other information concerning the Client and its activity which is unknown to third persons and by virtue of its being unknown has an actual or potential commercial value and the Client takes measures for the defense of its confidentiality.</p> <p>“Affiliate” of any person means any other person that, directly or indirectly through one</p>

անուղղակիորեն մեկ կամ մի քանի ածանցյալ անձանց միջոցով վերահսկում է, վերահսկվում է կամ գտնվում է ընդհանուր վերահսկողության տակ այդ անձի հետ: «Վերահսկում» տերմինը (ներառյալ «վերահսկող», «վերահսկվող» և «ընդհանուր վերահսկողության տակ» տերմինները) նշանակում է՝ ուղղակի կամ անուղղակի իշխանություն ունենալ անձի կառավարման և քաղաքականության ուղղության նկատմամբ քվեարկող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու, պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ: Այս սահմանման նպատակներով Ընկերության դուստր ձեռնարկությունը նշանակում է միայն ContourGlobal plc և ցանկացած դուստր ձեռնարկություն:

Երաշխիքային ժամկետ - ժամկետ, որի ընթացքում Մատակարարը պարտավորվում է Աշխատանքի հետ կապված Թերություններ ի հայտ գալու դեպքում վերացնել դրանք՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

Թերություններ՝ Աշխատանքի թերություն և/կամ անհամապատասխանություն(ներ) սույն Պայմանագրով սահմանված Օգտագործման Նպատակին և/կամ սույն Պայմանագրին և/կամ կիրառվող օրենսդրության պահանջներին և/կամ սովորաբար այդպիսի Աշխատանքներին ներկայացվող պահանջներին և/կամ սույն Պայմանագրի Հավելված 2-ում ներկայացված Աշխատանքի բնութագրին և տեխնիկական պահանջներին:

Լիազորված

ներկայացուցիչ - նշանակում է անձ /անձինք/, ովքեր լիազորված են ներկայացնելու Կողմին սույն Պայմանագրի կնքման և կատարման ընթացքում: Ներկայացուցիչների փոփոխման դեպքում անհրաժեշտ է ներկայացնել վերջիններիս իրավասությունը հավաստող փաստաթղթեր:

or more intermediaries, controls, is controlled by or is under common control with that person. The term “control” (including the terms “controlling,” “controlled by” and “under common control with”) means the possession, direct or indirect, of the power to direct or cause the direction of the management and policies of a person, whether through the ownership of voting securities, by contract or otherwise. For purposes of this definition, Affiliate of the Client means only ContourGlobal plc and any subsidiaries.

Warranty Period- the period of time during which in case Deficiencies arise in regard with the Works, the Contractor shall eliminate such Deficiencies as set forth by the present Contract.

Deficiencies - any default and/or defect and/or malfunctioning and/or non-compliance(s) of the Works to the Purpose defined by this Contract and/or to applicable legislation requirements and/or to requirements which are usually presented to such Works and/or to the technical characteristics and technical requirements, as defined in Annex 2 of this Agreement .

Authorized Representative- means the person (persons) authorized to represent the Party during the signature and performance of this Contract. In case the authorized representative is changed the new representative should provide documents to certify its authorities.

3.2 Կապալառուն պարտավոր է տրամադրել այն աշխատակիցների ցանկը, որոնք պետք է մուտք գործեն շինարարության տարածք Պայմանագրի գործողության ողջ տարածքում:	3.2 The Contractor shall provide the list of its Employees which shall have access to the construction site during the whole duration of this Contract.
4. Գինը և Վճարումը	4. Price and Payment
4.1 Աշխատանքի համար Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է XXX,XXX () ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:	4.1 The total price of the Contract for the Work constitutes AMD XXX,XXX () VAT excluded.
4.2 Կապալառուի գնային առաջարկում ներառված, Հավելված 3-ում ներկայացված միավորի գները գործում են սույն պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում և ենթակա չեն փոփոխության:	4.2 The unit prices fixed in Annex 3 are valid for the whole term of this Contract and are not subject to change.
- 4.3 Աշխատանքի համար վճարումը կատարվում է հաշիվ-ապրանքագիրը և Վերջնական Ընդունման-Հանձնման Ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում:	4.3 The payment for the Work shall be done within 30 /thirty/ days from the date of the bilateral signature of the invoice, and Final Acceptance Protocol.
4.4 Բոլոր վճարումները իրականացվում են բանկային փոխանցման միջոցով՝ ՀՀ դրամով:	4.4 All payments shall be made via bank transfers in AMD.
4.5 Հավելված 2-ում նախատեսված ծավալից մինչև 20 տոկոսի չափով ավելացման անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով փոփոխել Հավելված 2-ը:	4.5 4.5 In case of volume increase of Work provided in the Annex 2 of not more than 20%, the Parties must execute a VO and amendment of the Annex 2.
Փոփոխման հայտի իրագործումը պետք է իրականացվի հետևյալ կերպ՝ Կապալառուն պետք է խորհրդատվություն տրամադրի Պատվիրատուին և Կողմերը երկկողմանի բանակցություններ վարեն լրացուցիչ ծախսերի և աշխատանքների կատարման ժամկետի և պայմանագրի գնի փոփոխության վերաբերյալ: Այնուհետև, Պատվիրատուն կարող է հայցել Փոփոխման հայտ, իսկ Կապալառուն պարտավոր է այդպիսի հայտը ստանալու պահից տասնչորս (14) օրվա ընթացքում	The process of execution of VO must be as follows: Client shall notify the Contractor, and both parties shall consult concerning the estimated cost and impact on the time for completion, and the Contract price as the case may be. Client may request any such Variation to the scope of the Contract, and Contractor shall within fourteen (14) days of receipt of such request send any written objections to any term or condition, including the calculation of additional remuneration payable for such Variation and shall prepare, a detailed estimate of the cost of such change, taking into account

<p>ուղարկել գրավոր առարկություններ ցանկացած ժամկետի կամ պայմանի վերաբերյալ, ներառյալ նման փոփոխության լրացուցիչ հաշվարկը և նախահաշիվը՝ հաշվի առնելով այդպիսի փոփոխության ազդեցությունը աշխատանքների վրա, կատարման ժամկետի վրա և այլ համաձայնեցված և ստորագրված փոփոխման հայտերի վրա: Կապալառուի կողմից տասնչորս (14) օրվա ընթացքում որևէ առարկություն չներկայացնելը համարվում է փոփոխման հայտով նախատեսված բոլոր պայմանների և պայմանների հաստատում:</p> <p>Պատվիրատուն պետք է ուսումնասիրի Կապալառուի նախահաշիվը, և եթե այն ընդունելի է, կամ Կողմերը այլ կերպ համաձայնում են փոփոխման հայտին, ապա այդ ձևը հաստատվում է Պատվիրատուի կողմից, և Կողմերը ըստ այդմ փոփոխում են Աշխատանքների կատարման ժամկետը և Պայմանագրի գինը, ինչպես նաև այլ վերաբերելի Հավելվածներ, որոնք պահանջում են ճշգրտում՝ փոփոխության կարգը արտացոլելու համար:</p> <p>4.5.1 Կողմերը համաձայնում են, որ սույն Պայմանագրի գործողության արդյունքում Փոփոխման հայտերի քանակը չի կարող գերազանցել 2-ը (երկու):</p>	<p>the effect of such change on the Work, the Time for Completion and other agreed upon and contemplated Variation Orders. Failure by Contractor to deliver any objection within fourteen (14) days shall be deemed as approval of all of the terms and conditions set forth in the Variation Order.</p> <p>Client shall review Contractor's estimate, and if Client accepts or the Parties otherwise agree as to the Variation Order, such form shall be endorsed in writing by the Client and the Parties shall promptly adjust the Time for Completion and the Contract price as the case may be and any of the Annexes requiring adjustment to reflect the Change Order.</p> <p>4.5.1 The parties agree, that during the term of this Contract the number of Variation Orders should not exceed 2 (two).</p>
<p>5. Աշխատանքի Կատարումը</p>	<p>5. Work Performance</p>
<p>5.1 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին, Հավելված 2-ին, 3-ին և 4-ին, Աշխատանքի կատարման ընթացքում Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին և ցուցումներին, ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև սովորաբար և անվերապահորեն նման Աշխատանքի կատարմանը ներկայացվող նորմերին, կանոնների և ստանդարտներին համապատասխան:</p>	<p>5.1 The Contractor shall perform the Work in accordance with this Contract, Annex 2, 3 and 4 the requirements and instructions presented by the Client during the Work performance, the legislation of Armenia and the norms, rules and standards generally and absolutely presented for performance of such Work.</p>

5.2 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել անձամբ:	5.2 The Contractor shall perform the Work personally.
5.2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:	5.2.1 The Work is carried out by the Contractor's means, materials and funds.
5.2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:	5.2.2 Contractor shall be responsible for the quality of the materials and equipment provided.
5.3 Կապալառուն չի կարող, առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության, զիջել կամ փոխանցել սույն Պայմանագիրը կամ սույն Պայմանագրով նախատեսված որևէ իրավունք (ներառյալ, առանց սահմանափակումների, փոխհատուցման իրավունքը) և ցանկացած նման պայմանագիր կամ համաձայնություն, որին Պատվիրատուն իր համաձայնությունը չի տվել իրավաբանական ուժ չի ունենա վերջինիս համար:	5.3 Contractor may not, without Client's prior written consent, assign, transfer or hypothecate this Agreement or any interest in this Agreement (including, without limitation, any right to the payment of any compensation payable pursuant to this Agreement), and no purported assignment, transfer or hypothecation will be effective or enforceable, as against Client.
5.4 Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության Կապալառուն իրավունք չունի կնքել որևէ պայմանագիր որևէ ենթակապալառուի հետ, ներառյալ ցանկացած գործակալության, խորհրդատվության կամ ներկայացուցչական պայմանագիր կնքելու միջոցով, և ցանկացած նման պայմանագիր, որին Պատվիրատուն իր համաձայնությունը չի տվել իրավաբանական ուժ չի ունենա վերջինիս համար: Բոլոր հաստատված ենթակապալառության պայմանագրերը պետք է պարունակեն սույն գլխի դրույթները:	5.4 Contractor may not subcontract for any of the Services to be provided pursuant to this Agreement, including by way of any agency, consulting, or other representative agreement, without Client's prior written consent, and any purported subcontracting to which Client has not so consented will not be effective or enforceable as against Client. All approved subcontracts shall contain provisions substantially identical to those contained in this Agreement.
5.5 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարելիս պահպանել շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության կանոնները և այլ պարտադիր պահանջներն ու նորմերը, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Պատվիրատուի կողմից սահմանված Աշխատանքի և Անվտանգության	5.5 The Contractor shall comply to all environmental, health and work safety and other mandatory requirements and norms provided by the legislation of Armenia and Health and Safety Policy set by the Contractor (Annex 4) when performing the Work. The Client shall not be responsible for the damages caused to Contractor's employees and/or third persons and/or the property of third persons

<p>ապահովման պահանջներով (Հավելված 4): Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Աշխատանքի կատարման ժամանակ կամ դրա հետ կապված Կապալառուի աշխատողներին և/կամ երրորդ անձանց և/կամ Կապալառուի և/կամ երրորդ անձանց գույքին պատճառված վնասի համար: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին անմիջապես տեղեկացնել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործություն ունեցող կամ առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները խախտող յուրաքանչյուր պատահարի մասին, ինչպես նաև վերջինիս ներկայացնել գրավոր զեկույց նման պատահարների վերաբերյալ, պատահարը տեղի ունենալուց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր հետո:</p>	<p>during performance of the Work or related to it. The Contractor shall inform immediately the Client for each occurred incident which has negative effect on the environment or breaches the health and safety requirement as well as shall submit a written report to Client for such incident not later that one business day as from its occurrence.</p>
<p>5.6 Կապալառուն պարտավոր է մինչև Աշխատանքը սկսելը առնվազն 48 (քառասունութ) ժամ առաջ տեղեկացնել Պատվիրատուին Աշխատանքը սկսելու մասին և Պատվիրատուին ներկայացնել Աշխատանքը կատարելու հստակ և մանրամասն ժամանակացույց:</p>	<p>5.6 The Contractor shall inform the Client at least 48 (forty-eight) hours prior to start of the Work and provide a clear and detailed schedule of Work.</p>
<p>5.7 Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարելիս Կապալառուն և Կապալառուի աշխատակիցները ներկայացնում են Պատվիրատուին և հետևաբար պետք է գործեն բարձր պրոֆեսիոնալ կերպով, Պատվիրատուի շահերից ելնելով, բարեխղճորեն և ողջամտորեն:</p>	<p>5.7 When performing the Work defined in this Contract, the Contractor and the Contractor's Employees represent the Client, thus they shall act in highly professional way, for the interests of the Client, in good faith and reasonably.</p>
<p>5.8 Աշխատանքը կատարելիս Կապալառուն պարտավորվում է գործի դնել նման կապալառուի ամբողջ ողջամիտ ուշադրությունը և հմտությունները՝ նման Աշխատանքի կատարման համար ընդունված ընդհանուր ստանդարտներին համապատասխան:</p>	<p>5.8 When performing the Work the Contractor shall use all reasonable care and skills of the Contractor of such Work in accordance with the generally accepted standards for performance of such Work.</p>

<p>5.9 Ենթադրվում է, որ Կապալառուն ունի ամբողջական պատկերացում իրականացվող Աշխատանքի ծավալի և բնույթի վերաբերյալ և ունի Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային և այլ պարագաներ, որոնք սահմանված են սույն Պայմանագրում կամ որոնց այլ կերպ հղում է արվում կամ որոնք այլ կերպ անհրաժեշտ են նման Աշխատանքների կատարման համար:</p>	<p>5.9 The Contractor shall be deemed to have full knowledge of the extent and nature of the Work and to be allowed for all items of work shown upon, described by or referred to in this Contract or which are otherwise necessary to perform such Works.</p>
<p>5.10 Սույն Պայմանագրի 5.1-5.10 կետերի պահանջների չկատարումը կարող է հանգեցնել Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի դադարեցման:</p>	<p>5.10 Non-fulfilment of the requirements mentioned in Clauses 5.1-5.10 shall be a ground for unilateral termination of the Contract by Client.</p>
<p>6. Աշխատանքի Ընդունումը</p>	<p>6. Acceptance of the Work</p>
<p>6.1 Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ ստուգել Կապալառուի կատարած Աշխատանքի ընթացքը և որակը Աշխատանքի կատարման ընթացքում առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը: Այդպիսի հսկողության իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելիս Պատվիրատուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կապալառուին:</p>	<p>6.1 The Client shall be entitled to check the process and the quality of the Work during performance by the Contractor at its discretion without interfering Contractor's activity. Should deficiencies be discovered as a result of such inspection, the Client shall immediately inform the Contractor.</p>
<p>6.2 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Աշխատանքը ընդունելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է անհնար:</p>	<p>6.2 The Client shall be entitled to refuse acceptance of Work and to request reimbursement of the damages caused thereby, if the Contractor does not start performance of the Work on time or performs the Work so slowly that its termination on time becomes impossible.</p>
<p>6.3 Պատվիրատուի կողմից Աշխատանքի ստուգման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուն պարտավոր է վերացնել հայտնաբերված թերությունները և համապատասխանեցնել Աշխատանքը Պատվիրատուի պահանջներին 5 (հինգ) օրվա ընթացքում:</p>	<p>6.3 In case deficiencies are discovered by the Client during checking of the Work, the Contractor shall eliminate the discovered deficiencies and comply the Work with the requirements of the Client within 5 (five) days.</p>

<p>6.4 Աշխատանքի արդյունքի ստուգման արդյունքում սույն Պայմանագրով սահմանված կարգով Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուի հետ կազմվում է Թերությունների Ակտ, որտեղ նշվում է, որ Աշխատանքը ընդունված է վերապահումով: Այդպիսի ակտը համարվում է թերությունների ակտ, որտեղ սահմանվում են Աշխատանքի արդյունքում հայտնաբերված թերությունները և դրանց վերացման ժամկետները, եթե Պատվիրատուն պահանջում է թերությունների վերացում:</p>	<p>6.4 In case of revealed deficiencies, a Deficiency Protocol shall be executed with the Contractor defining that the Work has been accepted with reserves. Such Protocol shall be deemed as a deficiency act, where should be defined the deficiencies discovered in the Work result and the terms for their elimination if the Client requests elimination of the deficiencies.</p>
<p>6.5 Թերությունների վերացումից հետո Վերջնական Ընդունման-հանձնման Ակտը հաստատվում և երկկողմանի ստորագրվում է Կողմերի կողմից՝ հաստատելով Աշխատանքի ընդունումը:</p>	<p>6.5 After elimination of all deficiencies, Final Acceptance Protocol shall be approved and bilaterally signed by the Parties certifying the acceptance of Work.</p>
<p>7. Թերությունների Վերացումը</p>	<p>7. Elimination of Deficiencies</p>
<p>7.1 Գործող օրենսդրության և/կամ սույն Պայմանագրի խախտմամբ Աշխատանքի կատարման կամ Աշխատանքի թերություններով կամ ոչ ամբողջական կատարման, որոնք դարձրել են Աշխատանքի արդյունքը օգտագործման համար ոչ պիտանի կամ Աշխատանքի ոչ ամբողջական կամ թերի կամ թերությամբ կատարման դեպքում Կապալառուն պարտավոր է Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի ընթացքում, որը չպետք է գերազանցի 5 (հինգ) օրը անվճար նորից կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի թերությունները: Աշխատանքի պատշաճ կատարման համար Կապալառուին տրամադրված վերոնշյալ ժամկետը վերջինիս չի ազատում սույն Պայմանագրով սահմանված տույժերը վճարելու իր պարտավորությունից: Եթե վերոնշյալ ժամկետում Կապալառուին չի հաջողվում նորից պատշաճ կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի մեջ հայտնաբերված թերությունները կամ չի հաջողվում</p>	<p>7.1 In case the Work is performed with breach of the applicable legislation and/or this Contract or with deficiencies or partially, which have made the Work result unsuitable for use, the Contractor shall perform the Work again or eliminate the deficiencies of the Work performed free of charge, within the term, agreed between the Parties, which in no case shall exceed 5 (five) days. The mentioned term provided to the Contractor for proper performance of the Work, does not release the Contractor from the liability to pay the penalties, provided in this Contract. Should the Contractor within the mentioned term again fail to eliminate the deficiencies revealed or if such deficiencies are essential and cannot be eliminated, the Client shall be entitled, at its sole discretion, to:</p>

վերացնել դրանք ամբողջությամբ կամ եթե դրանք էական կամ չվերացող են, Պատվիրատուն բացառապես իր հայեցողությամբ իրավասու է՝	
7.1.1 Կապալառուից պահանջել Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 0,1 տոկոսի չափով ուշացման յուրաքանչյուր օրվա համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.1 request the Contractor to perform the Work in accordance with this Contract within the reasonable term, defined by the Client and to pay a penalty in the amount of 0.1% of the total price for each delayed day, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.
7.1.2 հրաժարվել չկատարված Աշխատանքի ընդունումից և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.2 refuse acceptance of the non-performed Work and request to pay a penalty in the amount of 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.
7.1.3 պահանջել համաչափ նվազեցնելու Աշխատանքի համար սահմանված գինը և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.3 to request to reduce proportionally the price defined for the Work and to pay a penalty in the amount of 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.
7.1.4 պահանջել հատուցելու թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը և պահանջել վճարել տուգանք Պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.4 request to reimburse the expenses incurred by the Client to eliminate the deficiencies and to pay a penalty in the amount of AMD 20% of the total Contract price, as well as reimburse the damages caused, in accordance with this Contract and the applicable legislation.
7.2 Պատվիրատուն իրավասու է նաև Կապալառուի հաշվին և ռիսկով անձամբ կամ իր կողմից ընտրված երրորդ անձի միջոցով պատշաճ տեսքի բերել կատարված Աշխատանքը կամ ավարտին հասցնել դրա կատարումը: Կապալառուն պարտավոր է այս հարցում	7.2 The Client shall be entitled at its discretion itself or through a third person at Contractor's risk and expense complete the Work. The Contractor shall assist the Client therein and notably hand over all documents necessary for that purpose.

աջակցել Պատվիրատուին և նրան տրամադրել այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:	
7.3 Եթե կատարված Աշխատանքի միայն մի մասն է թերի, ապա Պատվիրատուն իր հայեցողությամբ իրավասու է ընդունել Աշխատանքի միայն այն մասերը, որոնք զերծ են թերություններից՝ համամասնորեն վճարելով դրանց համար:	7.3 If only part of the Work performed is defective, the Client shall be entitled at its discretion accept only those parts that are free from defects and pay proportionally for them.
7.4 Սույն պայմանագրի առարկա հանդիսացող Աշխատանքների որակի երաշխիքային ժամկետը կազմում է ----- տարի:	7.4 The warranty period of the quality of the Works subject to this Contract shall be ----- years.
7.5 Երաշխիքային ժամկետը հաշվարկվում է Պատվիրատուի կողմից Աշխատանքը ընդունելու և Ընդունման-Հանձնման Ակտը Պատվիրատուի կողմից ստորագրման ամսաթվից: Երաշխիքային վերանորոգման ընթացքը չի հաշվարկվում երաշխիքային ժամկետի մեջ:	7.5 The Warranty Period of the Works should start from the Date of accepting the Works and signing the Acceptance Protocol. The Warranty Period of the Works with Deficiencies is prolonged for the period within which the Goods cannot be used due to discovered Deficiencies.
7.6 Երաշխիքային ժամկետի ընթացքում Կապալառուն պարտավոր է վերացնել Աշխատանքի ցանկացած տեսակի, ձևի, բնույթի Թերություն:	7.6 Within Warranty Period the Contractor is obliged to eliminate Deficiencies of any kind, nature, form of the Works.
7.7 Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ Թերությունների ուղղումը Երաշխիքային Ժամկետի ընթացքում իրականացվում է առանց որևէ լրացուցիչ վճարի:	7.7 The correction of the Deficiencies within the Warranty period is carried out at no cost.
7.8 Երաշխիքային ժամկետի ընթացքում Թերությունների վերացումը իրականացվում է ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 15 օրում:	7.8 The elimination of the Deficiencies within Warranty period is to be done within reasonable timeframe, but no more than within 15 days.
8. Ժամկետ	8. Term
8.1 Աշխատանքի կատարման ժամկետը սահմանվում է համաձայն Պատվիրատուի ժամանակացույցի, որը ներկայացված է տեխնիկական առաջադրանքում (Հավելված 2):	8.1 The term for performance of the Work is according to the timetable of Client, specified in the Technical Specification – Annex 2.
9. Գաղտնիությունը	9. Confidentiality

<p>9.1 Կապալառուն համաձայնում է (i) օգտագործել Գաղտնի Տեղեկատվությունը միայն սույն Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու նպատակով և (ii) պահել Գաղտնի Տեղեկատվությունը գաղտնի և չբացահայտել այն ամբողջությամբ կամ մասնակի որևէ անձի առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:</p>	<p>9.1 Contractor agrees to (i) use the Confidential Information solely for the purpose of conducting the works according to this contract and (ii) keep the information confidential and not disclose it, in whole or in part, to any person without the prior written consent of the Client.</p>
<p>9.2 Փոխհատուցման միջոցներ. Կապալառուն ընդունում և համաձայնում է, որ Պատվիրատուն սույն գլխի պահանջների խախտման կամ դրա սպառնալիքի արդյունքում կկրի վնասներ, որոնց փոխհատուցման համար Պատվիրատուն, ի թիվս այլ վնասների պահանջների, իրավասու է դիմել դատարան և պահանջել արգելել տեղեկատվության բացահայտումը և կիրառել հայցի ապահովման միջոցներ, որին Կապալառուն տալիս է իր համաձայնությունը:</p>	<p>9.2 Remedies. The Contractor acknowledge and agree that the Client would be irreparably injured by a breach of this agreement and that, in the event of a breach or threatened breach, the Client shall be entitled (in addition to any and all other remedies) to injunctive relief and specific performance, and the breaching party hereby irrevocably consents to such relief.</p>
<p>10. Պատասխանատվություն</p>	<p>10. Responsibility</p>
<p>10.1 Սահմանված ժամկետներում աշխատանքները չկատարելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել վճարել տուգանք պայմանագրի ընդհանուր գնի 0,2%-ի չափով յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, բայց ոչ ավել քան Պայմանագրի գնի 20%:</p>	<p>10.1 Should the Contractor be in delay of the performance of the Work, the Client is entitled to request the Contractor to pay penalties amounting to 0,2% of the Contract total price for each day of delay, but no more than 20% (twenty percent) of the Contract Price.</p>
<p>10.2 Սույն պայմանագրի Հավելված 4-ով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել խախտման յուրաքանչյուր դեպքի համար վճարել տուգանք պայմանագրի գնի 8%-ի չափով:</p>	<p>10.2 Should the Contractor fail to fulfil any of its obligations under the Annex 4, the Client is entitled to claim penalties amounting to 8 % of the Contract Price for each case of breach.</p>
<p>10.3 Եթե Կապալառուն խախտում է ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև սույն պայմանագրի Հավելված 4-ով սահմանված շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները, ապա Պատվիրատուն կարող է կասեցնել Կապալառուի աշխատանքները:</p>	<p>10.3 Should the Contractor violate the health and safety requirements specified in the legislation of Armenia, Annex 4, the Client is entitled to suspend the Contractor's activities (the term of the suspension shall depend on the gravity of the violation). After an inspection is performed and proposed by the Contractor remediation plan is approved, the Client shall</p>

<p>(աշխատանքների կատարման տևողությունը կախված կլինի խախտման ծանրության աստիճանից): Ստուգում անցկացնելուց և Կապալառուի կողմից ներկայացված ուղղիչ միջոցառումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո, Պատվիրատուն կարող է թույլատրել կամ արգելել շարունակել աշխատանքները: Պայմանագրի ժամկետը չի երկարացվելու աշխատանքների կատարման ժամկետով: Նման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի պահանջել, որպեսզի Կապալառուն կազմակերպի և պայմանագրում ներգրավված իր անձնակազմի հետ անցկացնի շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության դասընթաց՝ առնվազն 16 ժամ տևողությամբ:</p>	<p>have the right to allow or to ban the continuation of the works. The term of the Contract shall not be prolonged with the term of the suspension. In this case Client may request from the Contractor to organize and hold a health and safety course to its personal who is engaged with the execution of the Contract with duration of not less than 16 hours.</p>
<p>11. Պայմանագրի Դադարեցում</p>	<p>11. Contract Termination</p>
<p>11.1 Սույն Պայմանագիրը դադարեցվում է</p>	<p>11.1 This Contract is terminated in case of:</p>
<p>11.1.1 պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում, բացառությամբ եթե Կողմերը ունեն չկատարված պարտավորություններ:</p>	<p>11.1.1 expiration of the term of the Contract unless Parties have non-fulfilled obligations.</p>
<p>11.1.2 երկու կողմերի գրավոր համաձայնությամբ:</p>	<p>11.1.2 mutual agreement by both parties, expressed in writing.</p>
<p>11.1.3 կողմերից մեկի սնանկ ճանաչվելու դեպքում: Ամեն դեպքում յուրաքանչյուր Կողմ կրում է մինչև պայմանագրի դադարումը իր չկատարած պարտավորությունները կատարելու պարտականություն:</p>	<p>11.1.3 in case of insolvency of either party. In any case parties bear the responsibility to fulfill their obligations which occurred before the termination of the contract.</p>
<p>11.2 Սույն Պայմանագիրը կարող է միակողմանիորեն դադարեցվել Պատվիրատուի կողմից գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով</p>	<p>11.2 This Contract can be terminated unilaterally by the Client by sending a written notice:</p>
<p>11.2.1 ցանկացած խախտման դեպքում՝ 15 օր առաջ Կապալառուին գրավոր ծանուցում ուղարկելով,</p>	<p>11.2.1 In case of any violation with 15 days written notice submitted to the Contractor,</p>
<p>11.2.2 առանց պատճառի՝ 15 օր առաջ Կապալառուին գրավոր ծանուցելով և վճարելով կատարված և ընդունված աշխատանքների համար:</p>	<p>11.2.2 without cause with 15 days written notice to Contractor and upon payment for the actually performed and accepted works.</p>

11.2.3 Սույն Պայմանագրի 5.1-5.10 կետերի պահանջների խախտման դեպքում Կապալառուին գրավոր ծանուցելով այդ մասին, որն ուժի մեջ է մտնում անմիջապես	11.2.3 in case of non-fulfilment of the requirements mentioned in Clauses 5.1-5.10 by written notice to Contractor with immediate effect.
11.3 Պայմանագրի 11.2.1 կետով սահմանված պայմաններով Պայմանագիրը դադարեցվելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի պահանջել պայմանագրով սահմանված տուգանքները:	11.3 In case of termination of the Contract as per Clause 11.2.1 the Client shall be entitled to receive penalties stipulated in Contract.
11.4 Պատվիրատուն կարող է հաշվանցել նախքան պայմանագրի դադարեցումը կատարված աշխատանքի դիմաց Կապալառուին հասանելիք բոլոր գումարները՝ վերը նշված տուգանքների հետ:	11.4 The Client has the right to set off all amounts that are due to the Contractor for the work done before termination with the penalties amount mentioned above.
12. Ֆորս Մաժոր	12. Force Majeure
<p>12.1 Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել ֆորս մաժորի ազդեցության պատճառով, որն առաջացել է սույն Պայմանագրի ստորագրումից հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համարվում. երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը, պանդեմիան, քաղաքական հուզումները, հաղորդակցման ուղիների խափանումը, կառավարական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:</p> <p>12.1.1 Կապալառուն հավաստում և համաձայնում է, որ</p> <p>(Ա) Ներկայումս առկա որևէ իրադարձություն կամ իրադրություն, որը ծագել է կամ կապված է կորոնավիրուսային համավարակի հետ (հայտնի որպես կորոնավիրուս 2 Քովիդ-19)</p>	<p>12.1 The Parties shall be exonerated from the liability for non-execution or partial execution of the obligations envisaged by this Contract, if it is the result of a force majeure event which has arisen after signing this Contract and which Parties could not foresee and prevent and is beyond the control of the affected party. The mentioned situations may include earthquake, inundation, fire, war, declaration of state of emergency or martial law, pandemic, political movements, termination of the means of communication work, governmental bodies' acts, etc., which make impossible the execution of the obligations envisaged by this Contract.</p> <p>12.1.1 The Contractor acknowledges and agrees that:</p> <p>(A) any event or circumstance as of this date arising out of or in connection with the coronavirus disease known as coronavirus 2 ("COVID-19") (including the adoption, application or enactment of any legal</p>

<p>(ներառյալ՝ մինչ օրս կատարման ենթակա ցանկացած իրավական միջոց ընդունելը, կիրառելը կամ գործողության մեջ դնելը), որը առաջացել է մինչև սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը (Քովիդ-19 Իրադարձություն(ներ)) չի համարվում Ֆորս մաժորային իրադարձություն,</p> <p>(Բ) Կապալառուին իրավունք չի վերապահվում երկարաձգել ժամանակացույցը՝ հիմքում դնելով որևէ Քովիդ-19 Իրադարձություն,</p> <p>(Գ) Որևէ Քովիդ-19 Իրադարձության ազդեցություն պետք է համարվի սույն Պայմանագրով սահմանված Կապալառույի պարտավորությունները չկանխող, չխոչընդոտող, չխանգարող կամ չհետաձգող հանգամանք</p> <p>(Դ) Քովիդ-19 Իրադարձությունները ռիսկ է, որը կրում է Կապալառուն</p> <p>Այն դեպքում, երբ Քովիդ-19 Իրադարձությունները առարկայական բացասական զարգացում կունենա հանրային իշխանությունների կողմից տրված հրամանների շրջանակում, որոնք պահանջում են (i) Գործարանների փակում (ii) արտադրության հետաձգում (iii) սահմանների կամ նավահանգիստների փակում (iv) մարդկանց և տրասպորտի տեղաշարժի սահմանափակում (v) այլ առարկայական սահմանափակումներ, որոնք ուղղակիորեն ազդում է սույն Պայմանագրի կատարման վրա, երբ այսպիսի հրամանները ուղղակիորեն ազդում են Կապալառույի վրա (այն դեպքում, երբ Կապալառուն կարող է ապացուցել, որ Պայմանագրի կատարումը օբյեկտիվորեն անհնար է այսպիսի իրադարձության պատճառով) (Անսպասելի Քովիդ-19 Իրադարձություն), այսպիսի իրադարձությունները կհամարվեն Ֆորս մաժորային; Ֆորս մաժորային</p>	<p>measure enforceable until today) which has occurred prior to the date of this Contract (“Relevant COVID-19 Event(s)”) shall not constitute a Force Majeure Event;</p> <p>(B) the Contractor shall not be entitled to an extension of the schedule in respect of any Relevant COVID-19 Events.</p> <p>(C) the effects of any Relevant COVID-19 Event shall be deemed not to prevent, impede, hinder or delay the performance by the Contractor of its obligations under the Contract; and</p> <p>(D) Relevant COVID-19 Events are a risk borne by the Contractor.</p> <p>Should the Relevant Covid-19 Events materially adversely develop due to mandatory orders issued by public authorities that require: (i) the closure of factories, (ii) suspension of manufacturing, (iii) closure of borders or ports, (iv) limitations to transport of persons or vehicles; or (v) other material restrictions directly affecting performance of the Contract, where such orders directly impact the Contractor (provided that the Contractor can evidence that performance of the Contract becomes objectively impossible because of such events) (“Non-Foreseeable Covid-19 Events”), such events shall be considered Force Majeure Events.</p> <p>Contractor shall notify CG within 14 days after the Force Majeure Event or Non-Foreseeable Covid-19 Event and provide details with supporting documentation demonstrating the existence of the same and on the extent, it impacts the Schedule. Any</p>
---	--

<p>իրադարձության կամ Անկանխատեսելի Covid-19 Իրադարձության ծագումից հետո՝ 14 օրվա ընթացքում Կապալառուն պետք է տեղեկացնի Պատվիրատուին և տրամադրի մանրամասներ ,օժանդակ փաստաթղթերով, որոնք կապացուցեն համապատասխան հանգամանքների գոյությունը և ազդեցությունը ժամանակացույցի վրա: Ժամանակացույցի երկարաձգման վերաբերյալ ցանկացած պահանջ պետք է որոշվի և հաստատվի երկու Կողմերի կողմից, որոնք պետք է գործեն ողջամտորեն՝ չանտեսելով Կապալառուի պարտավորությունը՝ ձեռնարկելու բոլոր ողջամիտ միջոցները՝ Ֆորս մաժոր իրադարձությունը կամ Անկանխատեսելի Քովիդ-19 Իրադարձությունը կանխելու, նվազեցնելու և մեղմացնելու համար, Իրադարձություն</p> <p>Եթե ֆորս մաժորի ազդեցությունը կամ Անսպասելի Քովիդ-19 Իրադարձությունը տևում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով մյուս Կողմին:</p>	<p>requested extension of the Schedule shall be determined and approved by both of the Parties, who shall act reasonably, without prejudice to the Contractor's obligation to take all reasonable measures to prevent, minimize and mitigate the Force Majeure Event or Non-Foreseeable Covid-19 Event.</p> <p>If the force-majeure or Non-Foreseeable Covid-19 continues more than 3 consecutive (three) months, each Party shall be entitled to terminate this Contract with a prior notice.</p>
<p>12.2 Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարումը կասեցվում է ֆորս մաժորային իրադարձության ողջ տևողության ընթացքում:</p>	<p>12.2 Fulfilment of any related reciprocal obligations shall be suspended over the entire duration of the force majeure event.</p>
<p>13. Լրացուցիչ Դրույթներ</p>	<p>13. Supplementary Provisions</p>
<p>13.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից պարտավորությունների ամբողջական կատարումը:</p>	<p>13.1 The Contract shall enter into force upon bilateral signature and shall be valid till full performance of obligation of the Parties.</p>

13.2 Սույն Պայմանագիրը գերակայում է Կողմերի միջև նախկինում գրավոր կամ բանավոր կնքված որևէ համաձայնության նկատմամբ: Սույն Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև պայմանների վերջնական հաստատման բացառիկ փաստաթուղթ:	13.2 This Contract supersedes any prior written or oral agreements between the parties. This Contract is a complete and exclusive statement of the terms of the Contract between the Parties.
13.3 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի կողմից քննարկված և ստորագրված առանձին համաձայնությամբ: Փոփոխությունները կհամարվեն օրինական, եթե Կողմերը դրանք իրականացրել են սույն Պայմանագրի ձևով՝ ստորագրելով մեկ ընդհանուր փաստաթուղթ:	13.3 The amendments and additions to this Contract shall be discussed by the Parties mutually and defined in a separate amendment. The amendments shall be valid if the Parties have executed them in the form of this Contract by executing one mutual document.
13.4 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:	13.4 This Contract shall be governed by the legislation of Armenia.
13.5 Սույն Պայմանագրով բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային նամակով, հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ սույն Պայմանագրում նշված հասցեներով:	13.5 All notices of this Contract shall be by e-mail, fax or written letter, by the addresses defined in this Contract.
13.6 Սույն պայմանագիրը կազմվել է երկու հավասարազոր օրինակով՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Լեզուների միջև անհամապատասխանության դեպքում, նախապատվությունը տրվում է հայերեն լեզվին:	13.6 The present Contract is executed in two copies in Armenian and in English language. In the event of conflict between the English and Armenian language versions of this Contract, the Armenian language version shall prevail.
13.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է Երևան քաղաքի ընդհանուր առաջին աստիճանի իրավասության կամ ՀՀ Սնանկության դատարանի քննությանը:	13.7 All disputes in relation to the Contract should be solved by negotiations between the parties hereto. In case the latter is impossible the dispute should be brought before the Yerevan general jurisdiction first instance court or Bankruptcy Court of the Republic of Armenia.
13.8 Կոռուպցիայի, փողերի լվացման և ֆինանսական հանցագործությունների դեմ միջոցներ:	13.8 “Anti-Corruption, Money Laundering, and Financial Crimes.
ա. Կապալառուն ներկայացնում և երաշխավորում է, որ ոչ Կապալառուն, ոչ էլ նրա տնօրեններից որևէ մեկը, աշխատակիցները, դուստր ձեռնարկությունները, գործակալները կամ ներկայացուցիչները (հավաքականորեն՝	a. Contractor represents, warrants and agrees that neither Contractor nor any of its principals, employees, affiliates, agents or representatives (collectively, “Associates”): (i) has been formally charged or convicted of any financial crime; (ii) is or was the subject

«Փոխկապակցված անձինք»): I) պաշտոնապես չեն մեղադրվել կամ դատապարտվել որևէ ֆինանսական հանցագործության համար. (ii) չի ենթարկվել որևէ հետաքննության կամ ներգրավված եղել որևէ պաշտոնյայի կամ կառավարության ներկայացուցչի, կամ ստորաբաժանման, գործակալության կամ լծակի (որը ներառում է տարածաշրջանային կառավարման մարմինը կամ պետական պատկան մարմինները) օգտին որևէ վճարման կամ արժեքավոր իր տալու, կամ միջազգային հանրային կազմակերպության (օրինակ՝ Համաշխարհային բանկ, Եվրոպական համայնք կամ Աֆրիկյան զարգացման բանկ), կամ որևէ քաղաքական կուսակցության կամ կուսակցության պաշտոնյայի, կամ քաղաքական գրասենյակի թեկնածուի (վերը նշված «Կառավարության պաշտոնատար անձ») որևէ առաջարկի, վճարման կամ նվերի, վճարման խոստումի հետ կապված հարցման կամ վարույթի մեջ (պաշտոնական կամ ոչ պաշտոնական), (iii) ներկայումս կամ ապագայում սույն Պայմանագրի գործողության ընթացքում աշխատանքի է ընդունելու որևէ Կառավարության պաշտոնյայի, կամ վերջինիս ընտանիքի որևէ անդամի կամ որևէ Կառավարության պաշտոնյայի մերձավոր գործընկերոջ:

բ. Կապալառուն հավաստում և երաշխավորում է, որ ինքը և իր գործընկերները ծանոթ են և հասկանում են Եվրամիության, Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում գործող հակակոռուպցիոն, կաշառակերության դեմ պայքարի, հակաահաբեկչության և փողերի լվացման ու կիրառելի նմանատիպ օրենքների դրույթներին, այդ թվում, առանց սահմանափակման, ԱՄՆ-ի Արտաքին Կոռուպցիոն Դրսևորումների Ակտին, Մեծ Բրիտանիայի Կաշառակերության Դրսևորումների 2010թ-ի Ակտին, Միջազգային Բիզնես Գործարքներում Օտարերկրյա Պետական Պաշտոնյաների Կաշառակերության Դեմ Պայքարի ՏՀԶԿ կոնվենցիային (հավաքականորեն, որ «կաշառակերության դեմ պայքարի օրենքներ»): Սույն պայմանագրով

of any investigation, inquiry or proceeding (whether formal or informal) relating to any offer, payment, or gift, promise to pay, or authorization of the payment of anything of value to or for the benefit of any officer or employee of a government, or any department, agency or instrumentality thereof (which includes a regional governmental body or a government-owned business), or of a public international organization (such as the World Bank, the European Community or the African Development Bank), or any political party or party official or a candidate for a political office (any of the foregoing a “Government Official”); or (iii) is currently or will become, or currently employs or will employ, during the term hereof, any Government Official or any family member or close business associate of any Government Official.

b. Contractor represents and warrants that it and its Associates are familiar with and understand the provisions of the applicable European Union, UK, and U.S. anti-corruption, anti-bribery, anti-terrorism and anti-money laundering and similar laws, including without limitation the U.S. Foreign Corrupt Practices Act, the UK Bribery Act 2010, the Brazil Clean Companies Act (Law 12,846) and the OECD Convention on Combating Bribery of Foreign Public Officials in International Business Transactions (collectively, the “Anti-Bribery Laws”). In rendering its services pursuant to this Agreement, Contractor has caused itself and each of its

սահմանված աշխատանքների կատարման համար և սույն պայմանագրի ողջ ընթացքում Կապալառուն իր և իր գործընկերներից յուրքանչյուրի համար առաջադրում և շարունակելու է առաջադրել լիովին համապատասխանել Կաշառառության Դեմ Պայքարի բոլոր օրենքներն (առանց հաշվի առնելու յուրաքանչյուր գործի համար նման օրենքների իրավական պահանջները): Բացի այդ, Կապալառուն համաձայնում է, որ անմիջապես տեղեկացնի Պատվիրատուին այն մասին, եթե Կապալառուի ընտանիքի որևէ անդամ, մոտ բիզնես գործընկերը կամ որևէ գործընկեր ստանձնի որևէ պաշտոն: Նման դեպքում, Կապալառուն համաձայնում է, որ Պատվիրատուն իրավունք ունի, իր հայեցողությամբ, Կապալառուին պարտադրել համապատասխան սահմանափակումներ՝ ապահովելու համապատասխանությունը կաշառառության դեմ օրենքների պահանջներին:

գ. Կապալառուն համաձայնվում է կատարել և համապատասխանել Պատվիրատուի Հակակոռուպցիոն քաղաքականությանը (ներառյալ ՔոնթուրԳլոբալի Հակակոռուպցիոն համապատասխանության ուղեցույցը, որը կցվում է սույն պայմանագրին):

դ. Կապալառուն տալիս է իր համաձայնությունն առ այն, որ սույն Պայմանագրի շրջանակներում ոչ ինքը, ոչ էլ իր փոխկապակցված անձնացից որևէ մեկը ուղղակի կամ անուղղակի ձևով չեն առաջարկի, խոստանա կամ թույլատրի նվերի տրամադրում կամ արժեքավոր որևէ այլ բանի վճարում, այդ թվում՝ առանց սահմանափակման, չեն կիսվի կամ չեն խոստանա կիսվել որևէ վճարումներով կամ դրամական այլ միջոցներով, որոնք ստացել են, ստանում են կամ կստանան ՔոնթուրԳլոբալի հետ որևէ համաձայնագրի շրջանակներում՝ ի շահ կամ ի օգուտ որևէ պետական պաշտոնյայի կամ որևէ պետական պաշտոնյայի ընտանիքի անդամի կամ մտերիմ գործընկերոջ, ոչ պատշաճ կերպով՝ (ա) ազդելով պետական պաշտոնյայի պաշտոնական դիրքով պայմանավորված որևէ գործողության կամ որոշման վրա, (բ)

Associates and will, throughout the term of this Agreement, continue to cause itself and each of its Associates, to comply fully with all Anti-Bribery Laws (without regard in each case to the jurisdictional requirements of such laws). In addition, Contractor agrees that it will immediately inform Client in the event that any family member or close business associate of Contractor or any of its Associates becomes a Government Official. In such event, Contractor agrees that Client shall have the right, in its sole discretion, to impose the appropriate restrictions on Contractor to ensure compliance with the Anti-Bribery Laws.

c. Contractor agrees to execute and comply with Client's Anti-Corruption Policy (including the ContourGlobal Anti-Corruption Compliance Guide which is attached hereto).

